Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԸ ՎԵՐԱԴԻՏԱՐԿՎԱԾ

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱՐՏ 2014

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում: Աշխատանքում արտահայտված մտքերը կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Բովանդակություն

Երախտագիտության խոսք 4
Հապավումների ցանկ 5
Ներածություն 6
Գրականության ակնարկ 6
Մեթոդաբանություն 9
Հետազոտության հարցեր 11
Բովանդակային վերլուծություն 12
Որակական վերլուծություն 14
Հետազոտության արդյունքների ամփոփում 21
Եզրակացություն և առաջարկություններ 22
Հղումներ 25
Հավելված 1 Փաստաթղթերի ցանկ 27
Հավելված 2 Բառերի հաճախականության ցուցակ 30
Հավելված 3 Հարցազրույցի ուղեցույց 31
Հավելված 4 Հարցազրույցի ինդեքսավորման սխեմա 33

Երախտագիտության խոսք

Հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի թիմին՝ ակադեմիական և հանրային քաղաքականության ոլորտում հեղինակի հետաքրքրությանը համահունչ հետազոտություն իրականացնելու հնարավորություն ընձեռելու համար: Հեղինակը հայտնում է իր երախտագիտությունը Տաթևիկ Բաղալյանին՝ ուսումնասիրության բովանդակության հարստացման աջակցման, և Արմինե Բագիյանին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու համար: Սույն հետազոտությունը իրականացնելու նպատակով հեղինակը խորհրդակցել և հարցազրույցներ է անցկացրել անհատների հետ՝ ում ազակցությունը նշանակալից էր: Հեղինակը շնորհակալ է բոլոր մասնակիցներին իրենց ժամանակի եւ աջակցության համար: Այս զեկույցի բովանդակության պատասխանատվությունը հեղինակինն է:

Հապավումների ցանկ

ԱԽ	Աշխատանքային խումբ
Ալ	Արևելյան Գործընկերություն
ԱլԳ վեց երկրներ	Եվրոպական միության վեց գործընկեր երկներ, որոնք ընդգրկված են Արևելյան գործընկերության նախաձեռնությունում՝ Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա
ԱլԳ ՔՀՖ/Ֆորում	Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության Ֆորում
ԱՀ	Ասոցացման համաձայնագիր
ԱՊ	Ազգային պլատֆորմ
ԵՀՔ	Եվրոպական հարեւանության քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԽՀԱԱԳ	Խորը եւ համապարփակ ազատ առեւտրի գոտի
ԿԿՀԿ	Կառավարականորեն կազմակերպված հասարակական կազմակերպություն
ՀԱՊ	Հայկական ազգային պլատֆորմ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Ներածություն

2009 թվականին ԵՄ-ի կողմից մեկնարկեց Արևելյան Գործընկերության նախաձեռնությունը՝ վեց գործընկեր երկրներին կառավարման եվրոպական չափանիշներին առավել մոտեցնելու, ինչպես նաև արևելքում սահմանները կայուն պահպանելու նպատակով: Նախաձեռնությունը հնարավորություն է ընձեռում ԱլԳ երկրներին և ԵՄ անդամ պետություններին բարձրացնելու հաղորդակցության մակարդակը երկկողմ և բազմակողմ հարթակների միջոցով: Նախաձեռնության շրջանակներում գործընկեր երկրներում ֆինանսավորվում են տարատեսակ ծրագրեր՝ ինստիտուցիոնալ առավել լավ կարողությունների զարգացման, դեպի եվրոպական շուկա մուտքի ապահովման և լայնածավալ զարգացումների հասանելիության նպատակներով՝ միաժամանակ դարձնելով ԱլԳ-ն ԵՄ-ի արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից մեկը (European Union External Action Service 2014):

ԱլԳ ՔՀՖ-ը ստեղծվել է գործընկեր կառավարությունների հետ երկխոսությունը խթանելու նպատակով՝ հասարակական նախաձեռնության միջոցով: Միաժամանակ այն նպատակ ունի ուժեղացնել գործընկեր պետությունների քաղաքացիական հասարակությունները՝ ԵՄ անդամ պետությունների և ԱլԳ տարածաշրջանի կազմակերպությունների միջև համագործակցության խթանման միջոցով: Ֆորումի մասնակիցներն են ԵՄ-ի և ԱլԳ վեց անդամ պետությունների քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: Ֆորումի գլխավոր համագումարի հանդիպումները տեղի են ունենում տարին մեկ անգամ՝ ներառելով ԱլԳ ՔՀՖ-ի կառավարական կառուցվածքի բոլոր անդամներին, Ֆորումի ղեկավար կոմիտեի, վեց ԱՊ և հինգ ԱԽ անդամներին: Հինգ ԱԽ-ները հետևյալն են՝ Ժողովրդավարության, մարդու իրավունքների, լավ կառավարման եւ կայունության, Տնտեսական ինտեգրման եւ ԵՄ-ի քաղաքականության հետ մերձեցման, Շրջակա միջավայրի, կլիմայի փոփոխության եւ էներգետիկ անվտանգության, Մարդկանց միջև կապերի, եւ սոցիալական քաղաքականության, աշխատանքի եւ սոցիալական երկխոսության: ԱլԳ ՔՀՖ-ը շատ մեծ է, և մասնակիցները տարբերվում են իրենց կարողություններով, միջավայրով եւ գործելաոճով, ինչն էլ դժվարեցնում է Ֆորումի բոլոր մասնակիցներին ընդգրկող հետազոտական ծրագրերի և մոնիթորինգի անցկացումը (Eastern Partnership Civil Society Forum 2012):

Սույն հետազոտությունը նախագծվել է Ֆորումի ազդեցությունն ընդհանուր առմամբ, և ԱլԳ երկրների քաղաքացիական հասարակությունների վրա ազդեցությունը գնահատող առկա մեխանիզմների վերհանման նպատակով: Հետազոտությունը կենտրոնացված է Հայաստանի վրա՝ հարցման առարկա դարձնելով հայաստանյան քաղաքացիական հասարակության զարգացման վրա ԱլԳ ՔՀՖ-ի ազդեցությունը: Սույն աշխատությունը բացահայտում է Ֆորումի ազդեցության չափման մեխանիզմները, ուսումնասիրում է որոշակի ցուցանիշներ, որոնք օգտագործվում են գործընկեր երկրներում ԱլԳ ՔՀՖ-ի ազդեցության վերաբերյալ որոշակի եզրակացություններ կատարելու համար, քննարկում է Ֆորումի արդյունքները Հայաստանում՝ առանձնակիորեն կենտրոնանալով ՀԱՊ-ին, տրամադրում է որոշակի առաջարկություններ ապագա քաղաքականության վերանայման համար ԱլԳ ՔՀՖ քաղաքականության իրականացնողներին և որոշումներ կայացնողներին:

Գրականության ակնարկ

Սույն բաժինը քննարկում է ա) գործընկեր պետություններում ԱլԳ ՔՀՖ դերը գնահատող նախորդ հետազոտությունները, բ) հայկական քաղաքացիական հասարակությունը՝ արտաքին օժանդակության և համագործակցության համատեքստում:

Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորում

Համատեղ շվեդ-լեհական նախաձեռնության՝ Արևելյան գործընկերության մեկնարկը 2009 թվականին չի սահմանափակվում ԵՄ և ԱլԳ վեց պետությունների միջև հարաբերությունների խորացման գործիք լինելով: Այն նաև գործիք է՝ ուղղված Հարևանության շրջանակներում ժողովրդավարության խթանմանը և կայունության հաստատմանը: Վերոնշյալ նպատակներին հասնելու ճանապարհներից մեկն է քաղաքացիական հասարակությունների ակտիվ մասնակցության ընդլայնումը գործընկեր պետությունների ժողովրդավարացման գործընթացներում: ԱլԳ գագաթաժողովների մասնակիցները վերահաստատում են իրենց զարգացման եվրոպական ուղին ընդհանուր արժեքների հիման վրա՝ ընդգրկելով օրենքի գերակայությունը, ժողովրդավարությունը և մարդու իրավունքները,[1] ինչպես նաև վերահաստատում են միմյանց պարտավորությունները ԱլԳ ՔՀՖ-ի շրջանակներում ոչ կառավարական դերակատարների ընդլայնված գործունեությամբ: Արևելքում ԵՄ և իր գործընկերների հարաբերակցությունը մի ամբողջ հետազոտական համայնքի հետաքրքրության առարկա է հանդիսացել, որի անդամները կենտրոնացել են այս բազմակողմ համագործակցության հաստատման, զարգացման, մարտահրավերների և հետագա հեռանկարների վրա (Agnieszka et al. 2008; Lapczyński 2009; Mikhelidze 2009; Schäffer and Tolksdorf 2009; Boonstra and Shapovalova 2010; Korosteleva 2011): Համաձայն ոլորտում արված վերջին հետազոտություններից մեկի՝ թեև ԵՄ-ն ԱլԳ վեց երկրների քաղաքացիական հասարակություններին էական ուշադրություն է ցուցաբերում, այն պետք է ընդլայնի գործընկեր երկրների տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ուղղված իր ֆինանսական աջակցությունը (Rihackova 2014):

Որպես բավականին նոր ձևավորված հարթակ՝ ԱլԳ ՔՀՖ-ը որոշակի հետազոտողների ուշադրության կենտրոնում է հայտնվել: Համաձայն ընդհանուր գնահատմանը՝ դեռևս առկա են մի շարք մարտահրավերներ՝ կապված Ֆորումի ինստիտուցիոնալ կառուցվածքի և աշխատանքային մեթոդների հետ: Մի հետազոտության հեղինակներ էլ պնդում են, որ Ֆորումը դեռևս պետք է զարգացնի իր շահերի պաշտպանության/քարոզչական գործառույթներն ու ուժեղացնի իր ազգային կարողությունները (Kaca, Kucharczyk, and Lada 2011), մինչդեռ մեկ այլ հետազոտություն ԱլԳ ՔՀՖ-ին դրական արձագանք է տալիս, քանի որ հարթակը նպաստում է քաղաքացիական հասարակության դերակատարների ներգրավվածությանը և նրանց միջև փոխգործակցության հնարավորություն է տալիս: Այնուամենայնիվ, հետազոտությունների հեղինակները շեշտում են առկա մի շարք բարդություններ, ինչպիսիք են օրինակ՝ առաջնահերթությունների վերաբերյալ համաձայնության հասնելու դժվարությունը և որոշ գործընկեր պետությունների ազգային կառավարությունների դժկամությունը ԱլԳ շրջանակներում Ֆորումի առավել մեծ դերի վերապահումը (Kostanyan and Orbie 2013):

Դելկուրի (2011) համաձայն՝ ԱլԳ ՔՀՖ-ը մասնակցային նախաձեռնություն է, որը «չափազանց ակտիվ» է եղել գործընկեր պետությունների և ԵՄ-ի քաղաքացիական հասարակությունները միմյանց կապելու գործում: Հեղինակի վերոհիշյալ փաստարկը հիմնված է ԱլԳ ՔՀՖ շրջանակներում իրականացվող մի շարք ծրագրերի վրա: Միևնույն ժամանակ նշվում է, որ հարթակը չունի շոշափելի ֆինանսական մեխանիզմ՝ իր գործունեությունը պատշաճ կերպով ապահովելու համար: Նմանապես, շեշտվում է Ֆորումի ունեցած սահմանափակ հասանելիությունը քաղաքական գործընթացներին, ինչը կարող է հաղթահարվել ԵՄ-ի կողմից լրացուցիչ (ինստիտուցիոնալ) աջակցության միջոցով (Delcour 2011): Վերլուծելով Ֆորումի շահերի պաշտպանության/քարոզչական բնագավառում իրականացվող գործունեությունը՝ վերջերս արված մի հետազոտություն ԱլԳ ՔՀՖ-ին

[1] ԱլԳ գագաթաժողովի համատեղ հռչակագիր, Վիլնյուս (29-ը նոյեմբերի, 2013թ.)

տրամադրում է որոշակի առաջարկություններ՝ ուղղված Ֆորումի այդ գործառույթների ուժեղացմանը: Զեկույցը նաև շեշտում է Ֆորումի մասնակիցների կողմից ԵՄ պաշտոնյաներին ուղղված հայտարարությունների ազդեցության նկատմամբ հետևողականության իրականացման բարդությունը՝ կապված Ֆորումի կառավարական կառուցվածքի կարողությունների պակասի հետ (Shapovalova 2015): Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է ասել, որ ԱԼԳ ՔՀՖ վերաբերյալ մինչ այժմ իրականացված գնահատումները նշում են հարթակի սահմանափակ ազդեցությունը (Kaca, Kucharczyk, and Lada 2011), համեստ հաջողությունը (Kostanyan and Vandecasteele 2013), և պասիվ արդյունքները (Kostanyan 2014):

Հայաստանյան քաղաքացիական հասարակությունը

Արդեն երկու տասնամյակ է, ինչ հայաստանյան քաղաքացիական հասարակությունը Արևմտյան խոշոր դոնորների, մասնավորապես՝ Միացյալ Նահանգների և ԵՄ-ի հետաքրքրության առարկա է հանդիսանում: Ոլորտը հետաքրքրության առարկա է հանդիսանում ՔՀԿ-ների դերի, գործունեությանն ու կարողության խթանմանն ուղղված հսկայական օժանդակության առումով: Միացյալ Նահանգների կառավարությունը եղել է Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման վրա կենտրոնացող ամենախոշոր դոնորը (USAID 2011) և իրականացրել է ոլորտում երկու խոշոր հետազոտություններ 2001 թվականին (Blue, Payton, and Kharatyan 2001) և 2004 թվականին՝ նկարագրելով ՀԿ սեկտորը որպես դոնորներով պայմանավորված (Blue and Ghazaryan 2004): Այնուամենայնիվ, ՀԿ-ների չափից շատ ֆինանսավորումն ունեցել է նաև բացասական ազդեցություն: Ինչպես նշում է Արմինե Իշխանյանը, «ՀԿացում»-ը հանգեցրել է ապաքաղաքականացում եւ հանդարտեցրել է քաղաքացիական հասարակության ազատագրական ներուժը (Ishkanian 2008):

Հայաստանում քաղաքացիական հասարակության խթանման ԵՄ-ի մոտեցումն ի սկզբանե տարբեր է եղել: Եվրոպական երկկողմ և բազմակողմ դոնորների հարաբերակցությունը հայաստանյան հասարակության հետ ընթացել է հիմնականում կառավարության միջոցով: ԵՄ-ի հարաբերակցությունը Հայաստանի հետ ընդհանուր առմամբ կենտրոնացած է եղել պետության և վերնախավի ներկայացուցիչների հետ ամուր հարաբերությունների կառուցման վրա՝ ոչ իշխանական դերակատարների ներգրավվածության հաշվին (Raik 2006): Այս մոտեցումը փոխվեց ԵՀՔ և ԱԼԳ ծրագրերի մեկնարկով, որոնց հաջորդեցին ԵՄ-ի՝ որպես անհատական դերակատար, ԵՄ անդամ պետությունների և հայկական քաղաքացիական հասարակության միջև բազմամակարդակ շփումների հաստատմամբ:

Հայկական քաղաքացիական հասարակության ներքին մարտահրավերները՝ ընդդեմ եվրոպական և ամերիկյան ազդեցության, քննարկվում է Հայաստանի ժողովրդավարացման տեսանկյունից: Հեղինակները դրական եզրակացություններ են կատարում՝ նշելով, որ միջազգային կազմակերպությունների ջանքերը կարող են բերել արդյունավետ ժողովրդավարացման (Freire and Simão 2007): Այնուամենայնիվ, ԵՄ-ի ազդեցության համատեքստում իրականացվող բարեփոխումների [Հայաստանի ժողովրդավարացման գործընթացում] ազդեցությունն ուսումնասիրող որոշ հետազոտություններ պնդում են, որ ԵՄ քաղաքականությունը և ռեսուրսները մինչ այժմ Հայաստանի ժողովրդավարացման գործում հաջողություններ չեն գրանցել (Տե՛ս օրինակ՝ Smith 2012):

«Մենք երազում էինք քաղաքացիական հասարակության մասին և ստացանք ՀԿ-ներ» մեջբերումը[2] կատարելապես պատկերում է հայաստանյան քաղաքացիական

[2] Մեջբերումը՝ Timothy Garton Ash (2004), հղումը՝ A. Ishkanian 2008, էջ 24

հասարակության ներկայիս դրությունը, որը լի է ավելի քան 5000[3] գրանցված ՔՀԿ-ներով, որոնց կեսից ավելին անասելի պասիվ է, մյուս կեսն էլ, ըստ երևույթին, նույնիսկ գոյություն չունի (Paturyan, Gevorgyan, and Matevosyan 2014): Հայկական քաղաքացիական հասարակությունն ուսումնասիրող վերջերս կատարված հետազոտությունը պատկերում է, որ հետ-խորհրդային ժառանգություն հանդիսացող երրորդ ոլորտի նկատմամբ անվստահությունը և մասնակցության ցածր մակարդակը Հայաստանում մինչ այժմ պահպանվում է (Paturyan and Gevorgyan 2014)՝ չնայած, ինչպես կարելի է եզրահանգել, միջազգային դոնորների համառ ջանքերին և տրամադրվող ռեսուրսների քանակին: Հայաստանն ունի հրատապ և կոնկրետ կարիք ոչ թե փնտրելու, այլ գտնելու ուղիներ՝ առողջ, անկախ և ուժեղ հասարակության հասնելու համար:

Մեթոդաբանություն

Սույն բաժինը ներկայացնում է այն մեթոդները, որոնք ծառայել են հետազոտության առաջադրած նպատակների իրականացմանը: Հետազոտության նախագիծը որակական է՝ բաղկացած երկու բաղադրիչներից, մասնավորապես՝ բովանդակային վերլուծություն և կիսանախագծված հարցազրույցներ:

Բովանդակային վերլուծություն

Բովանդակային վերլուծությունն ընտրվել էր որպես հետազոտության մեթոդ՝ ԱլԳ ՔՀՖ-ի այն հիմնական փաստաթղթերի վերլուծության նպատակով, որոնք չափում են Ֆորումի ազդեցությունը:

Վերլուծության միավորներ

Որպես վերլուծության միավորներ ընտրվել են ԵՀՔ, ԱլԳ և ԱլԳ ՔՀՖ հիմնարար և ընթացակարգային փաստաթղթերը՝ ընդգրկելով հնգամյա ամբողջական ժամանակահատված՝ Ֆորումի հիմնադրման տարվանից՝ 2009 թվականի մայիս, մինչև նոյեմբեր, 2014 թվական: Ընտրված փաստաթղթերը ներառում են ԱլԳ ՔՀՖ հիմնադիր տեքստեր, հայեցակարգեր, ճանապարհային քարտեզներ, Ղեկավար կոմիտեի, ԱՊ-ների և ԱԽ-ների տարեկան զեկույցներ: ԵՀՔ և ԱլԳ հիմնական փաստաթղթերի շարքից Ֆորումին վերաբերող մեջբերումները բացահայտվել վերլուծության համար (Տե՛ս փաստաթղթերի ցանկը՝Հավելված 1-ում): Ընդհանուր առմամբ հետազոտության համար ընտրվել է 48 փաստաթուղթ (Տե՛ս Աղյուսակ 1): Վերլուծության հստակ շրջանակի զարգացման նպատակով ընտրված փաստաթղթերի վերանայումն իրականացվել է նախապես:

Բովանդակային վերլուծությունից դուրս մնացած փաստաթղթերն են Ֆորումի հայտարարությունները, դիրքորոշումների հայտարարությունները, ելույթները, հանդիպումների զեկույցներն ու հաշվետվությունները, ազգային պլատֆորմների հաշվետվությունները կոնկրետ հարցերի շուրջ (օրինակ ընտրությունների մոնիտորինգը Բելառուսում), տեղեկագրերն ու այլ նմանատիպ նպատակային փաստաթղթերը: Վերոնշյալ փաստաթղթերը բացառվել են այն պատճառով, որ դրանք ըստ էության ճանաչված են որպես հաջողության չափման մեխանիզմներ: Միևնույն ժամանակ հետազոտության ընդհանուր նպատակն է որոնել առկա պաշտոնական այն մեխանիզմները, որոնք ուղղված են Ֆորումի գործունեության ազդեցության չափմանը:

[3] Հայաստանի պետական ռեգիստրի տվյալներ, 1-ը փետրվարի 2015 թ.

Աղյուսակ 1 Բովանդակային վերլուծության համար օգտագործված փաստաթղթեր

	Փաստաթուղթ	Քանակ
1	ԵՀՔ և ԱլԳ հիմնական փաստաթղթեր	12
2	ԱլԳ ՔՀՖ հիմնական փաստաթղթեր	6
3	Ղեկավար կոմիտեի տարեկան զեկույցներ	4
4	ԱԽ տարեկան զեկույցներ	9
5	ԱՊ տարեկան զեկույցներ	17
	Ընդհանուր՝	**48**

Նշում՝ Փաստաթղթերը ներբեռնվել են ԱլԳ ՔՀՖ վեբ-կայքից՝ http://eap-csf.eu/

Ազդեցության չափման (ԱՉ) հայեցակարգում՝ փուլային շրջանակ

Վերլուծության շրջանակը գործառնապես սահմանելու համար ձևավորվել է ԱՉ՝ գործունեության զարգացման չորս հաջորդական փուլերի ընդգրկմամբ: ԱՉ հայեցակարգային փուլային շրջանակի նպատակն էր ձևակերպել ազդեցության չափման ցուցանիշներ և հասկացություններ՝ առկա տվյալներն իմաստավորելու, ինչպես նաև Ֆորումի հիմնական փաստաթղթերում առավել շատ օգտագործված ձևակերպումային խմբավորումների վերաբերյալ ընթերցողի դյուրացված պատկերացմանը նպաստելու համար: Բառերի խմբերը բացահայտվել են ԱՉ շրջանակում, որը սահմանում է առաջընթացին/արդյունքին հանգեցնող փուլերը: ԱՉ հայեցակարգային շրջանակում բացահայտվել են հետևյալ չորս փուլերը՝ *(1) Ինչ* (ԱՉ գործողություն՝ իրականացված ուսումնասիրելու ԱլԳ ՔՀՖ-ի հաջողությունը), *(2) Ինչպես* (ԱՉ իրականացնող գործիք), *(3) Ինչ* (հետևանք, որպես ԱՉ գործողությունն իրականացնող միջոցի իրականացման արդյունք), *(4) Արդյունք* (փոփոխություն կամ առաջընթաց՝ իրականացված նախորդ երեք փուլերի արդյունքում): Ընդհանուր առմամբ բացահայտվել են ԱՉ գործողություններին, միջոցներին, արդյունքներին և առաջընթացին արձագանքող 50 բառեր: Աղյուսակ 2-ը խմբավորում է յուրաքանչյուր փուլի համար բացահայտված բառերը:

Աղյուսակ 2 Ազդեցության չափման շրջանակ

(Ա) Գործունեություն	*(Բ) Գործիք*	*(Գ) Հետևանք*	*(Դ) Արդյունք*
Assessment	Criterion/a	Effect	Accomplishment
Analysis	Indicator	End-product	Achievement
Check	Instrument	End-result	Advancement
Estimation	Mechanism	Impact	Appraisal
Evaluation	Method/ology	Influence	Attainment
Examination	Procedure	Outcome	Change
Follow-up	Rating	Output	Contribution
Measure/ment	Scaling	Result	Development
Monitoring	Scoring		Enhancement
Regulation	Tool		Enrichment
	Statistics		Expansion
			Fulfilment
			Growth
			Improvement
			Progress
			Promotion
			Reaching
			Realisation
			Success
			Sustainability
			Upgrade

Բառերի խմբավորումը նպաստեց տեքստերում առկա ձևակերպումներում և հայտարարություններում ԱՉ պոտենցիալ ցուցանիշների որոշակի օրինաչափությունների բացահայտմանը: Օգտագործելով համակարգչային *Ctrl-F* որոնման գործիքը, ԱՉ շրջանակի յուրաքանչյուր բառ որոնվել է ընտրված փաստաթղթերում: Այն պարբերությունները, որտեղ առկա էին վերոնշյալ բառերը անցել են համապատասխան վերլուծություն: Հետազոտության առաջնորդն ու օգնականը վերոնշյալ որոնումն անցկացրել են միմյանցից անկախ՝ համեմատությամբ արդյունքները կրկնակի ստուգելու և սուբյեկտիվությունը նվազագույնի հասցնելու նպատակով: Անհամապատասխանության դեպքերը քննարկվել և հստակեցվել են: Տե՛ս բառերի հաճախականության ցուցակը՝ ներկայացված Հավելված 2-ում:

Թեև ընտրված բառերի հաճախականության դիտարկումը հետաքրքիր և վստահելի է (Տե՛ս օրինակ՝ Krippendorff 2004), միայն հաճախականությունները չեն կարող հանգեցնել իմաստալի եզրակացության: Այն պարբերությունները, որտեղ առկա էին ընտրված բառերը պահպանվել են առանձին ֆայլերում, այնուհետև տվյալները խմբավորվել են՝ համաձայն իմաստային օրինաչափությունների: Դասակարգմանը հաջորդել է վերլուծությունը՝ հիմնված թե՛ բառերի հաճախականության, թե՛ համատեքստի տեսակի վրա՝ փնտրելով Ֆորումի ԱՉ ցուցանիշներ և դրանց արդյունքում՝ Ֆորումի առաջընթացի չափորոշիչներ:

Հարցազրույցներ

Ընդհանուր առմամբ 14 կիսանախագծված հարցազրույց է իրականացվել ԱլԳ ՔՀՖ-ի, ԱՊ, ԱԽ անդամների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ԵՄ համակարգողների և պաշտոնյաների հետ: Հարցերը կենտրոնացված էին Ֆորումի հաջողության չափման ռազմավարության վրա, ինչպես նաև ազդեցության գնահատման, ԱլԳ ՔՀՖ-ի կառուցվածքի և ԱլԳ անդամ երկրների միջև համագործակցության և փոխհարաբերակցության հետ կապված դժվարությունների, ԱՊ-ների համեմատական գործունեության վրա (Տե՛ս հարցազրույցի ուղեցույցը Հավելված 3- ում): Հարցազրույցներն իրականացվել են 2014 թվականի նոյեմբերից մինչև 2015 թվականի փետրվար՝ Բաքումում, Երևանում և Վարշավայում: Հարցազրույցները ձայնագրվել և արձանագրվել են (յուրաքանչյուրը միջինը 30 րոպե տևողությամբ): Հարցազրույցների վերլուծությունն իրականացվել է MAXQDA որակական վերլուծության ծրագրային ապահովման համակարգի միջոցով: Տե՛ս հարցազրույցների ինդեքսավորման սխեման Հավելված 4-ում:

Նշում՝ Հետազոտությունն իրականացվել է անգլերեն լեզվով: Հետազոտության վերջնական զեկույցը թարգմանվել է հայերեն:

Հետազոտության հարցեր

Սույն աշխատանքի հետազոտական հարցերը հետևյալն են՝

1. Որո՞նք են ԱլԳ ՔՀՖ-ի ազդեցությունը չափող մեխանիզմները վեց երկրներում:
2. Որո՞նք են ԱլԳ ՔՀՖ-ի նպատակներին ուղղված գործողությունների կատարողականությունը չափող հաջորդական մեխանիզմները:
3. Ո՞րն է ԱլԳ ՔՀՖ-ի ազդեցությունը Հայաստանում:
   3.1 Որո՞նք են ԱլԳ ՔՀՖ-ի շրջանակներում ԵՄ-ի և Հայաստանի քաղաքացիական հասարակության համագործակցության արդյունքները:
   3.2 Ո՞րն է ԱլԳ ՔՀՖ-ի ներդրումը հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և Հայաստանի կառավարության միջև համագործակցության զարգացման մեջ:

Բովանդակային վերլուծություն

Սույն բաժինը ներկայացնում է ԱլԳ ՔՀՖ-ի հիմնական փաստաթղթերի վերլուծությունը՝ հետազոտության հարցերին որոշ չափով պատասխանելու նպատակով:
ԱՉ շրջանակի առաջին դասակարգման՝ *Գործողության (Ա)* ներքո խմբավորված բառերում մոնիթորինգ (*monitoring*) և գնահատում (*evaluation*) բառերը ուշադրություն են գրավում: Մոնիթորինգ բառն ունի ամենահաճախակի հղումը փաստաթղթերում, որտեղ այն հայտնվում է տարատեսակ համատեքստերում: Բառի նշումները հիմնականում անդրադառնում են գործընկեր երկրներում ԱլԳ կողմից կազմակերպված երկկողմ և բազմակողմ հարաբերակցությանը, բյուջետային աջակցությանը, առաջնային նախաձեռնություններին (flagship initiatives), ԱՀ կատարողականությանը և վիզային ռեժիմի դյուրացման հարցերին: Նմանապես, բազմաթիվ հայտարարություններում հղումներ են կատարվում ԱլԳ վեց երկրների ժողովրդավարական առաջընթացի նպատակով իրականացվող մոնիթորինգին ԱՊ-ների և ԱԽ-ների կողմից: Մոնիթորինգի գործընթացում կամ որպես մոնիթորինգի առարկա հանդիսացող ամենահաճախ հանդիպած «տարրը» ճանապարհային քարտեզն է: Փաստաթղթերը հղումներ են կատարում ճանապարհային քարտեզի մոնիթորինգին կամ դրա կարևորության մասին ընդհանուր հայտարարության տեսքով, կամ որպես յուրաքանչյուր ԱՊ-ի կողմից արդեն իսկ իրականացված գործողություն: *Մոնիթորինգ* բառը լայնորեն հանդիպում է որպես ծրագրերի, սեմինարների վերնագիր կամ ՔՀԿ-ների անուն: ԱլԳ ՔՀՖ-ի ԱՊ-ների և ԱԽ-ների կողմից մոնիթորինգի ակտիվ իրականացումը 5-րդ ամենահաճախակի հանդիպող համատեքստն է: Առկա են մի քանի անդրադարձեր մոնիթորինգի գործընթացում քաղաքացիական հասարակության (ԱՊ-ներից զատ) ընդգրկման կարևորությունը:[4] Ի տարբերություն մոնիթորինգի՝ որպես գործընթացի մասին ընդհանուր հայտարարություններին, ԱլԳ ՔՀՖ-ի մասնակիցների կարողությունների զարգացման կարևորությունը մոնիթորինգի իրականացման գործառույթի տեսանկյունից նշվում է միայն մեկ անգամ 2015-2017 թվականների ռազմավարության նախագծում (Eastern Partnership Civil Society Forum 2014):

Մոնիթորինգից զատ՝ փաստաթղթերում առկա են նաև *գնահատումներ* որոշակի ԱլԳ երկրների կոնկրետ թիրախային համատեքստում (օրինակ բնապահպանության և կլիմայական փոփոխության առաջընթացի գնահատումը Մոլդովայում): Նման համատեքստերին հաջորդում է առավել ընդհանուր դասակարգումը, որը շեշտում է ԱլԳ երկրների առաջընթացի, Ֆորումի մարմինների, վերջիններիս գործունեության և ընդունած փաստաթղթերի *գնահատման* կարևորությունը: *Գնահատումն* (*assessment)* առավել հաճախակի ընդգրկող համատեքստը բնապահպանական ազդեցության գնահատման արդյունավետ մեխանիզմների հաստատման և խթանման կարևորության մասին հայտարարություններն են:

Մոնիթորինգի գործառույթի իրականացման (*how)* մասին հղումները սահմանափակ են: Ֆորումի կողմից մոնիթորինգի իրականացման հիմնական գործիքները Եվրոպական ինտեգրման ինդեքսն[5] ու փորձագիտական աջակցությունն են: Բազմաթիվ անգամ նշումներ են կատարվում քաղաքացիական հասարակության կողմից վերահսկողական *մեխանիզմների* հաստատման կարևորության մասին ԱլԳ երկրների կառավարությունների կողմից իրականացվող որոշակի գործողությունների և գործընթացների նկատմամբ: Միակ հայտնաբերված ԱՊ-ն, որը տիրապետում է իր ազգային կառավարության վրա ազդեցություն գործելու փոքրաթիվ մեխանիզմների հայկական Ազգային պլատֆորմն է (EaP CSF Armenian National Platform Annual Report 2014):

---

[4] Ընդհանուր առմամբ բացահայտվել են հինգ դեպքեր
[5] Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.eap-index.eu/ (ներբեռնվել է փետրվարի 05-ին, 2015 թ.)

ԱՉ երրորդ դասակարգման շրջանակներում ուսումնասիրված բառերը գրեթե գոյություն չունեն, բացառությամբ *հետևանքի (result)* ըստ էության, որը (Գ) խմբում առկա ամենահաճախ հանդիպող բառն է (միևնույն ժամանակ այս բառը չորրորդն է ամենահաճախ հանդիպող բառերի հնգյակում[6]): *Հետևանքի* վերաբերյալ նշումներ ունեցող տեքստերի վերլուծությունը որոշ չափով դրական պատկեր է ստեղծում: Շատ համատեքստեր անդրադառնում են տարատեսակ հիշատակումների, որոնք հետևանք են ընդգրկում՝ ա) հատուկ թիրախային համատեքստում, ինչպիսիք են օրինակ հաջողակ ընտրությունները և հակակոռուպցիոն քաղաքականությունը, բ) հիշատակում որպես արտադրանք (output), օրինակ՝ *մոնիթորինգի արդյունքները քննարկվել են սեմինարների ընթացքում կամ ներկայացվել են հասարակությանը,* գ) հիշատակում որպես արդյունք (outcome)՝ ԽՀԱԱԳ –ի ստորագրումը որպես դրական արդյունք: Այլ հղումներ ընդգրկում են հիշատակումներ քաղաքացիական հասարակության ծրագրերի արդյունքների և գործողությունների խթանման կարևորության մասին, ներառյալ ԱլԳ ՔՀՖ-ի նպատակների իրականացումը օրենսդրական առաջարկությունների և շահերի պաշտպանության ոլորտներում, Եվրոպական ինտեգրման հնդեքսում արդյունքների առանձնահատկություններ, և այլն:
ԱլԳ ՔՀՖ-ի կողմից օգտագործված չափելի արդյունքները ներառում են ԱլԳ Ճանապարհային քարտեզի մոնիթորինգի մեթոդաբանության, իրականացման գործընթացի, ինչպես նաև ԱլԳ առաջնահերթությունների հնարավոր մոնիթորինգի մեթոդաբանության վերաբերյալ ներկայացումներ և քննարկումներ: Հստակորեն ներկայացվող «ապրանքի» օրինակ է հանդիսանում *լրատվական կայքի մեկնարկը ԱլԳ վեց երկրներում լրագրողների իրավունքների և ՁԼՄ-ների ազատության իրավիճակի վերաբերյալ:* Այնուամենայնիվ, բացակայում է հաջորդական քայլերի մասին տեղեկատվությունը՝ նմանատիպ արդյունքների ազդեցության և շոշափելի արժեքի վերաբերյալ:

ԱՉ փուլային շրջանակի չորրորդ խումբը առավել գրավիչն է՝ հավաքագրված տվյալների քանակի առումով: Բայց միևնույն ժամանակ այն ամենա անշոշափելի խումբն է իմաստային տեսանկյունից: Դասակարգման շրջանակներում ամենահաճախ օգտագործված հինգ բառերն են *զարգացումը (development), մոնիթորինգը (monitoring), փոփոխությունը (change), արդյունքն (result)* ու *առաջընթացը* (*progress*), որոնցից երեքը պատկանում են չորրորդ խմբին: Ամենահաճախ հանդիպող հղումներն արվում են ԱլԳ վեց երկրներում առկա ժողովրդավարական, քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների վերաբերյալ: Այս վերացական հիշատակումներին հաջորդում են առավել կոնկրետ հայտարարությունները՝ ԵՄ մարմինների, և մասնավորապես ԱլԳ ՔՀՖ-ի կողմից ձևավորվելիք հայեցակարգի, ռազմավարության, ճանապարհային քարտեզի և առաջարկությունների կարևորության և անհրաժեշտության մասին: *Փոփոխությունը* չորրորդ դասակարգման շրջանակներում առկա չորրորդ ամենահաճախ կրկնվող բառն է: Այնուամենայնիվ, հիմնական համատեքստի հաճախականությունն արտահայտվում է կամ *կլիմայական փոփոխությամբ* կամ որպես Յ-րդ ԱԽ անուն:[7] Բառը նույնպես օգտագործվում է ժողովրդավարական, քաղաքական, սոցիալական և տնտեսական փոփոխությունների համատեքստում՝ որպես ընդհանրական հայտարարություններ:

Բովանդակային վերլուծությունը բացահայտեց *առաջընթաց* (*progress*) բառի առկայությունը բոլոր փաստաթղթերում: Համատեքստերը թեև միօրինակ չեն, բայց հետաքրքիր արդյունքներ են արտացոլում: Հիմնական հղումները կատարվում են՝ ա) ԱՊ-ների հետ ԱԽ-ների զուգահեռ աշխատելու կարևորությունը՝ *առաջընթացի* հասնելու համար, բ) ԵՄ և ԱլԳ երկրների միջև համաձայնությունների իրականացման *առաջընթացի* վերաբերյալ մոնիթորինգի կարևորություն, գ) ԱլԳ *առաջընթացի* քննարկում՝ որպես գործընթաց և ընդհանուր հայտարարություն: Փաստաթղթերը նաև անդրադառնում են

[6] Տե՛ս Հավելված 2-ը՝ բառերի հաճախականության տվյալների համար
[7] ԱԽ3, 2-րդ թեմատիկ ենթախումբ՝ Կլիմայական փոփոխություն և բնապահպանական պաշտպանություն

առաջընթացի վերաբերյալ ավելի շոշափելի հայտարարությունների: Դրանք ընդգրկում են ժողովրդավարական անցման ճանապարհային քարտեզի իրականացման առաջընթացի քարտեզավորման/գոտեվորման կարևորությունը, մասնավորապես՝ առաջընթացն արձանագրված կոնկրետ թիրախային ոլորտներում (օրինակ հակակոռուպցիոն օրինագծի ընդունում), ինչպես նաև ԱլԳ նախաձեռնության շրջանակներում արձանագրված *առաջընթացի* միասնական և անհատական գնահատման կարևորության մասին նշումներ:

Խթանում (*promotion*) և նվաճում (*achievement*) պարունակող պարբերությունները նույնպես ուշադրություն են գրավում՝ կապված դրանց հաճախականության (այս դասակարգման շրջանակներում այլ բառերից զատ), և դրանց օգտագործման եղանակով: Եվրոպական արժեքների, եվրոպական ինտեգրման, ԱլԳ, ԱլԳ ՔՀՖ-ի, ԽՀԱԱԳ խթանման կարևորության մասին նշումները լայնորեն հանդիպում են: Ժողովրդավարության խթանումը և մշակութային արտահայտությունների բազմազանությունը լայնորեն օգտագործվում են ԱՊ-ների և ԱԽ-ների կողմից: ԱլԳ ՔՀՖ մարմինների նվաճումները սահմանվում են այնպիսի օրինակներով, ինչպիսիք են ենթախմբերի հաստատումը, փորձագիտական հետազոտությունները, փորձագետների ընդգրկումը, նախնական օրակարգերի և զեկույցների պատրաստումը: Ֆորումի նվաճումները (առանց որոշակի մասնավորեցումների) դրա նպատակների իրականացման կարևոր արդյունքներ են, և անհրաժեշտություն, որը կարող է իրականացվել Ղեկավար կոմիտեի և ԱՊ-ների աշխատանքի արդյունքում:

Բովանդակային վերլուծությունն իրականացվել էր գործընկեր պետություններում Ֆորումի ազդեցությունը չափող (ֆորմալ) մեխանիզմների հասանելիության հայտնաբերման նպատակով: Նաև, վերլուծությունը նպատակ ուներ բացահայտել Ֆորումի կառավարական կառուցվածքի կողմից իրականացվող առկա հաջորդական գործունեությունը: *Մոնիթորինգի արդյունքների* ու մոնիթորինգի իրականացման գործընթացի մասին բազմաթիվ հիշատակումներ առկա են փաստաթղթերում: Այնուամենայնիվ, լայնածավալ մոնիթորինգի իրականացման ուղիների, միջոցների և ազդեցության մասին տեղեկատվություն չի հայտնաբերվել, բացառությամբ հաճախակիորեն անդրադարձվող Արևելյան գործընկերության ինդեքսի (և այլ ինդեքսների[8]): Ինդեքսի հաստատման վերաբերյալ հիմնադիր գաղափարը Եվրոպական արժեքներին և չափանիշներին համապատասխանեցման երկրների կատարողականության համեմատությունն է: Եվրոպական ինտեգրման ինդեքսը սահմանում է երկրների առաջընթացի չափանիշները, ինչը կրում է չափազանց կարևոր բնույթ՝ երկրների համեմատական կատարողականության մասին տեղեկատվություն՝ հիմնված փաստերի վրա: Այնուամենայնիվ, ԱլԳ վեց երկրներին առավել առաջընթացի հասնելու համար անհրաժեշտ է այնպիսի գործիք, որը կբացահայտի յուրաքանչյուր գործընկեր պետության ներքին խնդիրները, կվերլուծի դրանք և կնախագծի լուծման կոնկրետ քայլեր:

Որակական վերլուծություն

Սույն բաժինը ներկայացնում է ԱլԳ ՔՀՖ-ի ներկայացուցիչների հետ կիսանախագծված հարցազրույցների միջոցով հավաքված առաջնային տվյալների վերլուծությունը: Այստեղ մասնավորապես քննարկվում են ԱլԳ ՔՀՖ-ի դժվարություններն ու ձեռքբերումները, դրա ազդեցությունը գործընկեր պետությունների քաղաքացիական հասարակությունների վրա, հաշվի է առնում ազդեցության գնահատման չափումները, ԵՄ-ի, ազգային

[8] Բազմաթիվ (N=38) հղումներ կատարվել են տարատեսակ ինդեքսների (մեդիա ինդեքս, մուտքի արտոնագրերի ազատականացման ինդեքս, և այլն)

կառավարությունների և քաղաքացիական հասարակությունների միջև հարաբերությունները, ինչպես նաև անդրադառնում է ԱլԳ ՔՀՖ հայաստանյան ազգային պլատֆորմին:

ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորում՝ դերը, դժվարություններն ու ձեռքբերումները

ԱլԳ ՔՀՖ-ը հաստատություն է՝ կոչված խթանելու ԵՄ ինտեգրումը ԱլԳ պետություններում, միևնույն ժամանակ ծառայելով որպես գործիք՝ հետևելու պետությունների կողմից ԱլԳ ծրագրի շրջանակներում իրականացվելիք գործունեությանը: Ֆորումի դերի մասին ամենաճանաչված սահմանումներից մեկն է հետևյալը՝ քաղաքացիական հասարակությունները հաշվետու են պահում կառավարություններին և պետական մակարդակում ազդում են վերջիններիս որոշումների վրա: Ֆորումը հնարավորություն ստեղծում քաղաքացիական հասարակությունը ինստիտուցիոնալացնելու և ԱլԳ վեց պետությունների քաղաքականության գործընթացներում վերջիններիս դերը ուժեղացնելու համար:

ԱլԳ ՔՀՖ-ի հաջողության մասին կարծիքները տարբեր են: Նախևառաջ, հաջողության երաշխավորումը կայանում է դրա սահմանման մեջ: Ֆորումի հաջողությունը դրսևորվում է որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակությունների մասնակցային ընդգրկմամբ: Այն ազդեցություն է գործում հանրային իրազեկվածության մակարդակի վրա, ապահովում է եվրոպական կազմակերպությունների հետ հաղորդակցությունների խողովակը, և համաձայն արձագանքի, ըստ այդմ՝ ուժեղացման աղբյուր է հանդիսանում: ԱլԳ վեց երկրների հզորացումը կապված է նախկինում չլսված վայրերում լսելի դառնալը: Իր առկա իրավիճակից, արդյունքներից և ձեռքբերումներից զատ, այն ընկալվում է որպես «*...ԱլԳ համատեքստում ամենահաջողակ ձայներից մեկը*»:[9]

Մասնակիցների մեծամասնության կարծիքով ԱլԳ ՔՀՖ-ի հաստատման հիմքում ընկած հիմնական գաղափարն էր ապահովել ԱՀ-ների իրականացման և մոնիթորինգի գործընթացը՝ հանրային աջակցության, վերահսկողական մեխանիզմների և հիմնականում քարոզչական գործառույթի միջոցով: Այսպիսով, հարցվածների կեսն ընկալում են Ֆորումի հաջողությունը որպես ԽՀԱԱԳ-ի ստորագրում. այսպես Ֆորումը հաջողություն է երեք երկրներում, որոնք ստորագրել են համաձայնագիրը,[10] մինչդեռ այն անհաջողություն է՝ մնացած երեք պետությունների կողմից ստորագրելու անկարողության պատճառով: Այնուամենայնիվ, ԵՄ-ի համար անհրաժեշտ է տարածաշրջանի վրա կենտրոնացած մնալ: Հարցազրույցների մասնակիցներից մեկի կարծիքով, «ԱլԳ երկու ճամբարների միջև գոյություն ունեցող տարբերակումն ընկած է ոչ թե մարդկանց, այլ քաղաքական վերնախավերի հիմքում»:[11] Վերոնշյալը կարևոր է Ֆորումի համար՝ իր ապագա քաղաքականությունը մշակելու տեսանկյունից:

Որոշ մասնակիցներ նախընտրում են քննարկել Ֆորումի ներդրումները՝ հաջողության փոխարեն: Հետխորհրդային երկրների հասարակություններում ԱլԳ ՔՀՖ-ը որոշակի դրական փոփոխություններ է ներմուծում: Օրինակ՝ նախաձեռնությունը միանշանակորեն հաջողություն է Վրաստանում, քանզի վրացական ազգային պլատֆորմը դարձել է քաղաքացիական հասարակության հիմնարար հարթակ վրացական հասարակության և կառավարության համար, ինչպես նաև բազմաթիվ կարևոր հարցերի իրականացմանը նախորդող քննարկումների կարևոր մասնակից: Վերոնշյալը ցույց է տալիս լիազորությունների այնպիսի մակարդակ, որին պետք է ձգտեն բոլոր ԱՊ-ները: Ֆորումի

[9] Հեղինակի հարցազրույցը ԱլԳ ՔՀՖ-ի Ղեկավար կոմիտեի անդամի հետ, 20-ը նոյեմբերի 2014թ.
[10] Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա
[11] Հեղինակի հարցազրույցը ԱլԳ ՔՀՖ-ի Ղեկավար կոմիտեի անդամի հետ, 21-ը նոյեմբերի 2014թ.

ձեռքբերումները պայմանավորված են իր գործունեության համար տրամադրվող ռեսուրսների քանակով: Ռեսուրսների մեծ քանակը նշանակում է, որ Ֆորումը հաջողություններ է արձանագրում, ինչպես դա ընկալում են հարցազրույցների որոշ մասնակիցներ: Այսպես, մասնակիցներից մեկն ասում է, «Ֆորումը զուտ ֆինանսավորման մեխանիզմ է»[12]՝ պնդելով, որ դրա հիմնական գործառույթը ֆինանսավորման տրամադրումն է:

Ինչ վերաբերում է դժվարություններին, մասնակիցներից կեսի կարծիքով, ԱՊ-ներին իրենց գործունեության մեջ հաջողության հասնելու համար, Ֆորումը պետք է երաշխավորի յուրաքանչյուր պլատֆորմի հստակ կազմությունը՝ զերծ մնալով կառավարականորեն կազմակերպված ՔՀԿ-ների ներառումից: Մասնակիցները վստահ չեն՝ արդյո՞ք ԱՊ-ների կազմում անկախ ՀԿ-ների հավասարակշռումը ԳՈՆԳՈ-ների հետ լավ է: Մինչ այժմ, վերոնշյալը չի մոտեցրել ԱՊ-ներին իրենց հիմնական առաքելություններին հասնելուն: Խնդիր է նաև ԱՊ-ների և ազգային կառավարությունների միջև համագործակցության վստահելի ճանապարհների ընտրությունը: Դա մարտահրավեր է հատկապես այն ԱԼԳ երկրներում, որոնց ազգային պետությունները չեն վերաբերում իրենց երկրների քաղաքացիական հասարակության դերակատարներին որպես համագործակցության հավասար գործընկերներ ընդհանուր սոցիալական զարգացման գործում:

ԱԼԳ ՔՀՖ-ի ազդեցությունը գործընկեր պետությունների քաղաքացիական հասարակությունների զարգացման վրա

Հաստատելով ԵՄ քաղաքացիական հասարակության հարթակի ազդեցության կարևորությունը ԱԼԳ երկրների հասարակությունների զարգացման վրա՝ սույն հետազոտության էական հատվածը կոչված է բացահայտելու՝ արդյո՞ք կա նման ազդեցություն: Այս տեսանկյունից թերևս, մասնակիցների տեսակետները զգալիորեն տարբերվում են և պահանջում են քննություն:

Ընդհանուր առմամբ դիտարկելով Ֆորումը որպես դրական նախաձեռնություն՝ հարցազրույցի մասնակիցները ներկայացնում են տեսական հայեցակարգի հիման վրա ձևավորված փաստարկներ: Մասնավորապես՝ փաստարկները վերաբերում են քաղաքացիական հասարակությունների փորձառության ավելացմանը՝ փորձի փոխանակման միջոցով, գործընկերների շրջանակի ընդլայնմանը, տեղեկատվության փոխտրամադրմանը՝ քարոզչության և դրամահավաքի կարողությունների զարգացման ուղղված խողովակների բացահայտման տեսանկյունից: Որոշ մասնակիցների կարծիքով, ազդեցությունը մեծ է, քանզի Ֆորումն օգնում է ցածր կարողություններով կազմակերպություններին բացահայտվել, սովորել և առաջընթաց արձանագրել (ԱՊ-ներում ընդգրկման միջոցով):

Ֆորումի դրական ազդեցության մեկ այլ նկատառում վերաբերում է ՔՀԿ-ների ուժեղացված կարողությանը՝ իրենց կառավարությունների վրա ազդեցության տեսանկյունից, քանզի ԱՊ-ների և ազգային կառավարությունների միջև փոխհարաբերությունները գրեթե միշտ ապահովվում են ԵՄ-ի ազդեցության միջոցով, երբեմն նույնիսկ վերջինիս կողմից ճնշման արդյունքում (այնուամենայնիվ, ճնշումը «փափուկ» է՝ համապատասխան ԵՄ-ի տասնամյակներ տևող խելամիտ արտաքին քաղաքականության): Այսպես, ազգային կառավարությունների վրա վերահսկողության ֆորմատի իրականացումը քաղաքացիական հասարակության կողմից հնարավոր չի լինի առանց ԵՄ ազդեցության:

[12] Հեղինակի հարցազրույցը ՔՀԿ ներկայացուցչի հետ, 27-ը հունվարի, 2015թ.

ԱլԳ երկրների հասարակությունների վրա Ֆորումի ազդեցության մասին խոսելիս՝ կարևոր է տարբերակել անդամ երկրներ երկու ճամբարների միջև: Ֆորումը, թվում է, ունի ազդեցություն Մոլդովայում և Վրաստանում. երկրները հստակորեն հետապնդում են զարգացման եվրոպական ուղին: Վերոնշյալ երկրների քաղաքացիական հասարակության ոլորտները՝ ներկայացված բազմաթիվ ՔՀԿ-ներով, միասնական են եվրոպական ինտեգրման քաղաքականության նկատմամբ ունեցած իրենց հայացքներով: Այս պատճառով, Ֆորումի ազդեցությունն ընդհանուր առմամբ ընկալվում է որպես օգտակար: Այնուամենայնիվ, Ֆորումը չունի լուրջ ազդեցություն ադրբեջանական, բելառուսյան և հայաստանյան հասարակությունների վրա, բացառությամբ գուցե ԱՊ-ների կազմում առկա առանձնահատուկ կազմակերպությունների՝ հարցականի տակ պահելով քաղաքացիական հասարակության ոլորտները: Այս դեպքում Ուկրաինան համատեքստից դուրս է մնում: Ուկրաինայի ճգնաժամը սկսվեց ԽՀԱԱԳ-ի ստորագրումից («ամենաճանձրալի փաստաթուղթը, որը հանգեցրեց հեղափոխության»)[13] և այս դեպքը մեծամասամբ դիտարկվում է ԱլԳ հաջողության ենթատեքստի տեսանկյունից. ողբերգություն, բայց ի վերջո հաղթանակ՝ ազատության տեսքով. «... Ուկրաինացիները հպարտ են, որ գտել են Ուկրաինան ազատականացնելու ճանապարհը »:[14]
Ֆորումի ազդեցությունը ԱլԳ երկրների վրա մեծամասամբ պայմանավորված է տվյալ հասարակության շրջանակներում տիրող առկա իրավիճակով: Որոշ հասարակություններ ունեն ակնհայտ խնդիրներ՝ կապված տեղեկատվության պակասի և ազգային բնութագիրների տարբերությունների հետ: Առավել մեծ ազդեցության հասնելու համար Ֆորումը պետք է լրջորեն հաշվի առնի վերոնշյալ նպատակային թիրախները:

Գործընկեր պետություններում ԱլԳ ՔՀՖ-ի ազդեցության չափումը

Ֆորումի գործունեության և, ընդհանուր առմամբ դրա ազդեցության չափման վերաբերյալ կարծիքները սահմանափակ են: Մասնակիցների մեծամասնությունը հաճախակի հղում են կատարում ԱլԳ երկրների եվրոպական ինտեգրման ինդեքսին, որը Ֆորումի ազդեցության չափման առաջնային գործիք է հանդիսանում: ԱլԳ ՔՀՖ-ի գործունեության ճանապարհային քարտեզի գնահատումը մեկ այլ նախաձեռնություն է, որը դիտարկվում է որպես հաջողության չափման օգտակար մեխանիզմ: Ճանապարհային քարտեզի մոնիթորինգն իրականացվում է յուրաքանչյուր ԱլԳ անդամ պետության կողմից: [15]

Նմանապես, երբ խոսքը գնում է Ֆորումի հիմնական նպատակների իրագործմանն ուղղված հաջորդական գործունեության հասանելիության ուսումնասիրությանը, չափման մեխանիզմները սահմանափակվում են որոշակի ոլորտներում երկրների զարգացման քննությանն ուղղված տարատեսակ ինդեքսներին: Օրինակ, ժողովրդավարության, մարդու

[13]Մեջբերում՝ կատարված ԱլԳ ՔՀՖ-ի Ղեկավար կոմիտեի համանախագահի կողմից Հայաստանում ՀԱՊ-ի և ԵՄ ներկայացչության կողմից կազմակերպված հանդիպման ժամանակ, փետրվար 2015թ.
[14] Մեջբերում՝ կատարված ուկրաինական Ազգային պլատֆորմի ներկայացուցչի կողմից ԱլԳ ՔՀՖ 6-րդ գերագույն համագումարի ժամանակ, Բաթում, Վրաստան, 2014թ.
[15] Ճանապարհային քարտեզի գնահատումներ հասանելի հետևյալ հղումներով՝ Հայաստան՝ http://eap-csf.eu/assets/files/News/Armenia-roadmap-monitoring-csf-nov-2013-(2).pdf, Ադրբեջան՝ http://eap-csf.eu/assets/files/News/Azerbaijan-roadmap-monitoring-csf-nov-2013-(1).pdf, Բելառուս՝ http://eap-csf.eu/assets/files/Articles/Web/Roadmapreports/Belarus%20roadmap%20monitoring%20csf%20nov%202013%20(3).pdf, Վրաստան՝ http://eap-csf.eu/assets/files/Articles/Web/Roadmapreports/Georgia%20roadmap%20monitoring%20csf%20nov%202013%20(2).pdf, Մոլդովա՝ http://eap-csf.eu/assets/files/News/Moldova-roadmap-monitoring-csf-nov-2013-(1).pdf, Ուկրաինա՝ http://eap-csf.eu/assets/files/Articles/Web/Roadmapreports/Ukraine%20roadmap%20monitoring%20csf%20nov%202013%20(2).pdf

իրավունքների, լավ կառավարման և կայունության առաջին ԱԽ-ի վիզային ռեժիմի դյուրացման ենթախումբը զբաղվել է մուտքի արտոնագրերի ազատականացման ինդեքսի մշակմամբ,[16] որը ցույց է տալիս ԱլԳ երկրների զարգացումները՝ կապված վիզային ազատականացված ռեժիմի հետ: Մեկ այլ օրինակ է հանդիսանում ՁԼՄ-ների ազատության ինդեքսը, որը չափում է ԱլԳ վեց երկրների ՁԼՄ-ների ազատականության մակարդակը: Հաջորդական գործողությունները ներառում են նաև կողմնակի իրադարձությունները (որպես ընդհանուր ժողովների հաջորդականություն) և ԱՊ-ների կողմից արված և տարածված հայտարարությունները (որպես տեղեկատվության հավաքագրման և հայտարարությանը նախորդող փաստաթղթերի նախապատրաստման հաջորդականություն):

Մասնակիցներից կեսի կարծիքով՝ ԱՊ-ների կազմում ընդգրկվող ՔՀԿ-ների քանակը հաշվի է առնվում որպես հաջողության առաջատար ցուցանիշ: ԱլԳ ՔՀՖ անդամների կողմից իրականացված գործողությունների և ջանքերի ազդեցությունը չափող առկա այլ ցուցանիշները ներառում են զեկուցման և արձագանքի ձևաթղթերը, որոնք վերլուծում են Ֆորումի անդամ կազմակերպությունների միջև հաղորդակցման կապերը և միասնականորեն մշակված գործողությունները:

Մասնակիցները շեշտում են, որ բազմաթիվ ԱլԳ ՔՀՖ ծրագրեր և գործողություններ չեն հասնում «հաջորդականության» փուլին: Առկա է միաձայն համաձայնություն այն մասին, որ ԱլԳ ՔՀՖ-ի գործունեության ազդեցության չափումը էական նշանակություն ունի: Ազդեցության չափումը մասնավորապես կենսական է ընդհանուր հաջողության և համաձայնությունների հաջողված իրականացման տեսանկյունից: Միասնական խոշոր գնահատման համակարգը Ֆորումի ներսում բացակայում է, այնինչ այն կծառայեր որպես երկրների քաղաքացիական հասարակությունների և դրանց բարեփոխումների շրջանակներում հասած զարգացումների վրա Ֆորումի ազդեցության չափման գործիք:

Բացակայում են ԱլԳ ՔՀՖ-ի հաջողությունը մատնանշող կառուցվածքային ցուցանիշները, որոնք մինչ այժմ հիմնված են եղել փորձագետների կարծիքների և վերլուծությունների վրա: Ներմուծված ինդեքսները երկրների զարգացումը մատնանշող արժեքավոր ներդրումներ են հանդիսանում համեմատական տեսանկյունից: Այնուամենայնիվ, ԱլԳ ՔՀՖ-ը խոշոր հաստատություն է, և առկա է առանձնահատուկ մոտեցման կարիք՝ գնահատումը ակնհայտ դարձնելու համար: Պետք է ճգտել, որ ԱլԳ ՔՀՖ-ի յուրաքանչյուր բաղկացուցիչ մարմնի գործունեությանը հաջորդի *ինչ անել հաջորդիվ* հարցադրումը: Ֆորումը հանդիսանում է շահերի պաշտպանության, քարոզչական հարթակ: Այնուամենայնիվ, դրա արդյունավետության համար այն պետք է վերաճի համագործակցության հարթակի, այն պետք է իրականացնի մոնիթորինգ և մշտապես աշխատանքում պետք է հիմնվի արդյունքների ուղղվածությամբ մշակված ծրագրերի վրա: Հարցազրույցի մասնակիցներից մեկի կարծիքով, «Ֆորումը զբաղված է մոնիթորինգի ենթարկելով այն, թե ինչ են անում ուրիշները և ինչ արդյունքերի են հասնում, բայց ոչ ոք մոնիթորինգի չի ենթարկում ԱլԳ ՔՀՖ-ը»:[17]

ԵՄ-քաղաքացիական հասարակություն-ԱլԳ ազգային կառավարություններ հարաբերակցությունը

Արտաքին քաղաքականության հարթակի ձևերի և դրան վերաբերող հարցերի մասին իրականացվող հետազոտության պարագայում՝ հարթակի հիմնական դերակատարների միջև հարաբերությունների դինամիկայի ուսումնասիրությունն էական նշանակություն ունի: Այս հարաբերությունները հատկապես կենտրոնական են դառնում հարաբերակցության

[16] Հասանելի է հետևյալ հղումով http://monitoring.visa-free-europe.eu/ (ներբեռնվել է փետրվարի 11-ին, 2015թ.)
[17] Հեղինակի հարցազրույցը ԱլԳ ՔՀՖ-ի Ղեկավար կոմիտեի անդամի հետ, 21-ը նոյեմբերի 2014 թ.

ազդեցության և տվյալ երկրի հաջողության կամ ձախողման շրջանակներում այդ հարաբերությունների ներդրման համատեքստում:

ԱլԳ երկրների քաղաքացիական հասարակությունների և ազգային կառավարությունների միջև հարաբերությունների խթանիչ հանդիսացող դերը պատկանում է ԵՄ-ին: Համենայն դեպս, ԵՄ վարքագիծը ԱՊ-ների նկատմամբ երկակիորեն է ընդունվում: Թեև ԵՄ-ի աջակցությունը մեծ է, այն ծայրահեղականորեն շրջահայաց վարքագիծ է ցուցաբերում ազգային կառավարությունների հետ հարաբերակցության շրջանակներում: ԱՊ-ների անդամների կարծիքով կան մի շարք ոլորտներ, որտեղ ԵՄ ուղղակի միջամտությունը կբերեր դրական արդյունքի, օրինակ, երբ խոսքը գնում է ընտրությունների մոնիթորինգի և ֆինանսավորման տրամադրման մասին: ԵՄ-ն պետք է հետամուտ լինի բարեփոխումների իրականացման գործընթացին՝ ազգային կառավարություններին տրվող ֆինանսական միջոցների տեսանկյունից: Քաղաքացիական հասարակության մասնակիցներից մեծամասնության կարծիքով՝ վերոնշյալն իրականացնելու համար անհրաժեշտ է ազգային կառավարությունների կողմից բարեփոխումների իրականացման առավել խիստ ցուցանիշների ներմուծում:

Համագործակցության վերջնական նպատակը պետք է լինի եվրոպական արժեքների որդեգրումը: Ահա այստեղ ԱլԳ վեց երկրների քաղաքացիական հասարակությունները պետք է կարևոր դեր ունենան՝ իրականացնելով կրթական գործառույթ և նպաստելով վերջնական նպատակի իրականացմանը: Այսպիսով, դրանք պետք է հզորացվեն ԵՄ կողմից տրամադրվող ֆորմալ մեխանիզմով՝ իրենց ձայնը լսելի դարձնելու և ազգային կառավարությունների կողմից հարգված դառնալու համար:

ԱլԳ ՔՀՖ-ի հայկական ազգային պլատֆորմ

ՀԱՊ-ի հաստատումը պայմանավորված էր մի շարք խնդիրներով: Հարթակի ձևավորումը ուղղորդվեց վերին աստիճանի էթիկայից զուրկ և ոչ պրոֆեսիոնալ դրսևորմամբ՝ ՀԱՊ առաջին ընտրությունների տեսանկյունից: Կառավարական և ոչ կառավարական հարթակի ներսում իշխանության համար պայքարը ՔՀԿ-ների անդամների միջև անառողջ բախումների առարկա դարձավ: Այս ճնշումների արդյունքը եղավ անդամների միջև միմյանց մատնանշելը, որը մասնակիցներից մեկի խոսքերով. «... իմ երբևիցե տեսած ամենաբացասական երևույթն էր»:[18]

Երբ խոսքը գնում է ՀԱՊ-ի գործունեության մասին, տեսակետները հակասում են միմյանց: ՀԱՊ-ի հաջողությունը պայմանավորված է ՔՀԿ-ների խոշոր քանակի ընդգրկմամբ, որն ըստ մասնակիցների մեծամասնության զուտ ձևական բնույթ կրող մարմին է: Հայկական պլատֆորմը ԱլԳ ՔՀՖ շրջանակներում ԱՊ ձևավորվող առաջին հարթակն էր: Այլ գործընկեր պետությունների հետ համեմատության մեջ՝ այն ՔՀԿ-ների ամենամեծ քանակ ունեցող պլատֆորմն է: Քանակն, այնուամենայնիվ, այս պարագայում որակի ցուցանիշ չի հանդիսանում: Իրականում, ընդհանուր 198 կազմակերպությունների միայն մեկ երրորդ հատվածն է ակտիվորեն ընդգրկված Ֆորումի առաքելության ու նպատակների խթանման մեջ:[19]

Հիմնական դերակատարների միջև հարաբերությունների դինամիկան նույնպես կատարյալ չի եղել: Մասնակիցների կարծիքով, ԵՄ-ՀԱՊ հարաբերությունները ուսումնասիրվում են ԵՄ-ի այն դիտարկման տեսանկյունից, որ հարթակն ինքը պետք է գտնի կառավարության վրա

[18] Հեղինակի հարցազրույցը ԱլԳ ՔՀՖ-ի Ղեկավար կոմիտեի անդամի հետ, 21-ը նոյեմբերի 2014թ.
[19] Տեղեկատվությունը տրամադրվել ՀԱՊ-ի քարտուղարության կողմից

ազդելու եղանակները, եթե ազգային իշխանությունները հակված չեն համագործակցության: Հայկական կառավարության և ՀԱՊ-ի միջև հարաբերակցության նախաձեռնումը մեծամասամբ իրականացվել է վերջինիս կողմից և սահմանափակվել է հանդիպումների ձևաչափով, որոնք էլ հիմնականում ձևական բնույթ են կրում: Հայկական ԱՊ-ի մեխանիզմներն ու հնարավորությունները չեն զարգացվել առավելագույն կարողությունների ներդրման տեսանկյունից: Ենթադրվում էր, որ ԱՊ-ների զարգացումը պետք է իրականացվի հենց վերջիններիս կողմից, ինչը, դժբախտաբար, չի վերաբերում հայկական հարթակին:

Պլատֆորմի համար կենսականորեն անհրաժեշտ է զարգացնել կառավարության վրա ազդեցություն գործելու իր կարողությունները, մասնավորապես, երբ գրեթե հնարավոր չէ ընդգրկվել պետական մակարդակի որոշումների կայացման գործընթացում, քանզի պետական մակարդակի որոշումները զուտ կամայական բնույթ են կրում, և հասարակությունը նույնիսկ նախապես չի տեղեկացվում դրանց մասին:[20] ԱլԳ ՔՀՖ-ի յուրաքանչյուր ԱՊ պետք է հասնի հեղինակության այնպիսի մակարդակի, որը վերջինիս թույլ կտա ազդեցություն ունենալ կառավարական որոշումների ընդունման վրա, մինչդեռ ՀԱՊ-ի ղեկավարությունը մինչ այժմ այս պարագայում արդյունավետորեն չի գործել: ԱՊ-ների գործողությունները պետք է հասարակական պահանջարկ ձեռք բերեն և ազգային կառավարությունների կողմից պետք է դառնան անդրադարձի առարկա: Հայկական հարթակին անհրաժեշտ են ուժեղ և անկախ անդամ-կազմակերպություններ՝ հանրային ընդգրկվածությունն ապահովող և ամբողջ երկրում, համապատասխան մակարդակներում իրենց ձայնը լսելի դարձնելու համար զարգացած կարողություններով:

ԵՄ-ի ամենամեծ հիասթափությունն էր 2013թ. Սեպտեմբերին Հայաստանի համար ԱՀ-ի տեսլականի փլուզումը՝ ՀԱՊ-կառավարություն հարաբերակցության բոլոր ուղիները փակուղի մտցնելով: Իր ներկայիս ձևաչափում Պլատֆորմի համար դժվար է հասկանալ իր դերը. «Ակնհայտ է, որ առկա իրավիճակում ԵՄ-ի հետ չկան համաձայնություններ և պարտավորություններ, մեզ մոտ բացակայում են մեխանիզմների զարգացման հնարավորությունները, կառավարությունն էլ դրանում հետաքրքրված չէ»:[21]

Թե՛ ԱլԳ ՔՀՖ-ին, թե՛ Հայաստանին անհրաժեշտ է վերանայել ՀԱՊ-ի կառուցվածքը՝ առավել արդյունքների հասնելու համար: ԱՊ-ներում ընտրության ընթացակարգի վերաբերյալ անհրաժեշտ է նոր որոշումների ընդունում, որը կերաշխավորի ՔՀԿ-ների առավել խոհեմ ընտրություն, այն է՝ ավելի պակաս ձևական բնույթ կրող ընթացակարգի ապահովում, ռեսուրսներ, ֆինանսավորում և հանրային վստահություն վայելող ՔՀԿ-ների ընդգրկում: Որոշ ազգային կառավարություններ, որոնք նվիրված են միայն իրենց իշխանությունը պահպանելու գաղափարին չեն նախընտրի այնպիսի ԱՊ-ների կազմավորում, որոնցում ընդգրկված կլինեն մասնագիտացված ՔՀԿ-ներ՝ նվիրված շոշափելի առաջընթացի իրականացմանը: Բայց նման ՔՀԿ-ների ընդգրկումը պետք է նախընտրելի լինի ԵՄ-ի համար, որն այս դեպքում որպես առաջնահերթություն կդիտարկի եվրոպական ֆինանսավորման վերահսկողությունը և շահերի պաշտպանությունը քաղաքացիական հասարակության կողմից: ԵՄ-ն պետք է աջակցության կարևոր աղբյուր լինի ԱՊ-ների համար և այն պետք է մտահոգված լինի հարթակներում ուժեղ, անկախ և վստահելի հանրային կազմակերպությունների ապահովմամբ: Ֆորումն էլ կնախընտրի ԱՊ-ներում տեսնել այնպիսի ՔՀԿ-ներ, որոնք ընդգրկվում են ոչ թե ֆինանսական միջոցների, այլ բարեփոխումների համար:

[20] Բազմաթիվ հղումներ են կատարվել Հայաստանի կողմից ԽՀԱԱԳ համաձայնագիրը չստորագրելու մասին որոշմանը

[21] Հեղինակի հարցազրույցը ՀԱՊ անդամի հետ, 21-ը նոյեմբերի 2014թ.

Հետազոտության արդյունքների ամփոփում

ԱլԳ ՔՀՖ հիմնադիր մարմինների կողմից չեն նախատեսվել համապատասխան մեխանիզմներ և միջոցներ, որոնք կչափեն Ֆորումի ազդեցությունը և կապահովեն ԱլԳ ՔՀՖ-ի մասնակիցների հաջողության կողմնորոշումը: Ներկայումս, Եվրոպական ինտեգրման ինդեքսը ԱլԳ վեց երկրների գործունեության զարգացումները չափող միակ մեխանիզմն է, որը սահմանափակվում է համեմատական տեսանկյունից հետազոտությունների արդյունքների ներկայացմամբ: Ֆորումը նաև ստեղծել է զեկուցման ձևաթղթեր, որոնք, այնուամենայնիվ, չեն երաշխավորում կանոնների խիստ իրականացում և բավարար չեն համարվում: Հստակորեն հասկանալի «ապրանքների» օրինակները, ինչպիսին է *լրատվական կայքի մեկնարկը* կամ *արդյունքների ներկայացումը,* չեն նախատեսում հաջորդական քայլեր՝ իրական ազդեցության կամ արդյունքների շոշափելի արժեքի մասին տեղեկատվության տրամադրման տեսանկյունից: Քանզի քարոզչությունը հանդիսանում է Ֆորումի հիմնական գործառույթը, հաճախ տեղեկատվության տարածումը՝ հայտարարության տարածման միջոցով /տեսքով/, որպես այդպիսին ընկալվում է որպես ձեռքբերում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մեխանիզմ, որը կապահովի տվյալ գործողության, այս դեպքում՝ տարածված հայտարարության ազդեցության հաջորդականությունը: Օրինակ՝ արդյո՞ք հայտարարություններն իրականում հասել են թիրախային բնակչության զանգվածին, բնակչության ո՞ր հատվածն է արդյունքում ստացել համապատասխան տեղեկատվությունը: Նման հարցադրումները կարևոր բնույթ են կրում շոշափելի արդյունքների հասնելու տեսանկյունից՝ հիմնված որոշակի ցուցանիշների վրա, օրինակ՝ տեղեկացված մարդկանց քանակը: Ֆորումի մասնակիցները կարևորում են մոնիթորինգի գործընթացը: Այնուամենայնիվ, ԱլԳ ՔՀՖ-ի մասնակիցների մոնիթորինգի գործառույթի հետ կապված կարողությունների զարգացման կարևորության շեշտադրումը կաղում է: Սա բարելավման պոտենցիալ ոլորտ է հանդիսանում այն ԱլԳ երկրների համար, որոնք այս տեսանկյունից հաջողության չեն հասել:

ԱլԳ ՔՀՖ-ը հաստատվել էր ԱլԳ երկրների թե՛ քաղաքացիական հասարակությունների, թե՛ ազգային կառավարությունների վրա ազդեցություն գործելու նպատակով: Հայաստանում Ֆորումի ազդեցությունը մինչ օրս սահմանափակվել է ՀԱՊ-ում որոշակի կազմակերպությունների ընդգրկմամբ: Փորձը ցույց է տալիս, որ Ֆորումը չի ծառայում իր հիմնական նպատակին, մասնավորապես՝ Հայաստանում պետական մակարդակի որոշումների ընդունման վրա ազդեցություն գործելուն: ՀԱՊ-ն ունի ճանաչված քաղաքացիական հասարակության հաստատություն դառնալու խնդիր: Հայաստանում չափելի ազդեցություն ունենալու համար՝ Ֆորումը պետք է արժանանա վստահության և հարգանքի թե՛ Հայաստանի ազգային կառավարության, թե՛ ընդհանուր հասարակության կողմից:

Ֆորումի շրջանակներում ԵՄ-ի և հայաստանյան քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը չի հանգեցրել խոշոր արդյունքների: Համագործակցությունը սահմանափակվել է ձևական բնույթ կրող հանդիպումներով, ֆինանսավորմամբ և ԵՄ-ի կողմից կազմակերպված միջոցառումներում ՔՀԿ-ների մասնակցությամբ: ԱլԳ ՔՀՖ-ը հայաստանյան քաղաքացիական հասարակության զարգացման վրա չունի որևէ ազդեցություն: Այն նպաստում է ընտրյալ ՔՀԿ-ների զարգացմանը՝ վերջիններիս սեփական զարգացման համար հնարավորությունների տրամադրմամբ՝ այլ երկրների ՔՀԿ-ների հետ հարաբերակցության միջոցով: Այնուամենայնիվ, նմանօրինակ զարգացումը սահմանափակված է միայն հարթակի անդամ հանդիսացող ընտրյալ կազմակերպությունների համար:

ՀԱՊ-ը չունի բավարար մեխանիզմներ հայկական կառավարության վրա ազդեցություն ներգործելու համար. վերջինս չի ճանաչում ՀԱՊ-ը՝ որպես համագործակցության հավասար գործընկեր: Ֆորումի ներդրումը տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և Հայաստանի կառավարության միջև համագործակցության զարգացման մեջ սահմանափակվում է հայկական պլատֆորմի ընտրյալ ՔՀԿ-ների հետ պաշտոնական հանդիպումների իրականացմամբ:

Եզրակացություն և առաջարկություններ

Իր հաստատումից ի վեր՝ յուրաքանչյուր նախաձեռնություն հանձն է առնում ծավալելու արդյունավետ գործունեություն՝ ուղղված նախաձեռնության ստեղծման հիմնարար գաղափարներ հանդիսացող նպատակների իրականացմանը: Մտապահելով վերոնշյալ հարցումը՝ սույն հետազոտությունը նախագծվել է ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի արդյունքների բացահայտմանն ուղղված միջոցների/միջոցառումների դիտարկման նպատակով՝ առանձնակիորեն կենտրոնանալով Հայաստանի վրա: Վերջինիս դեպքում այն մինչ օրս մեծամասնը ձևական բնույթ է կրել:

Յուրաքանչյուր երկրում քաղաքացիական հասարակության աճը ընդհանուր հաշվով պայմանավորված է պետության որոշումների կայացման գործընթացներում վերջինիս ներգրավվածության աստիճանով: Որոշակի ԱլԳ երկրներ կարողացել են հասնել ներգրավվածության բարձր մակարդակի՝ հանգեցնելով դրանց համապատասխանեցմանը Ֆորումի առաքելությանը և նպատակներին, որոշ երկրներին էլ դա չի հաջողվել: Հայաստանյան քաղաքացիական հասարակությունը բազմաթիվ դժվարությունների է բախվում այս ուղղությամբ հաջողության հասնելու գործում: Հայկական քաղաքացիական հասարակությունը բնութագրվում է սահմանափակ հնարավորություններով՝ նկատի ունենալով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավվածությունը որոշումների ընդունման գործընթացներում, մինչդեռ վերջիններիս ներգրավվածությունը՝ որպես հանրային պատասխանատվության գործիք, երկրի համար կարևոր նշանակություն ունի՝ հաշվի առնելով քաղաքական և տնտեսական ուժերի կենտրոնացվածությունը:

Այնուամենայնիվ, ԱլԳ ՔՀՖ-ը հսկայական ներուժ ունեցող հաստատություն է, որը դեռևս պետք է «ակտիվացվի» ԱլԳ-ան այն երկրներում, որոնց վերնախավերը չունեն դա անելու համար բավարար քաղաքական կամք և քաջություն: Միևնույն ժամանակ վճռորոշ նշանակություն ունի գործընթացներից դուրս գտնվող ազգային պլատֆորմների ներկայացվածության ապահովումն ազգային մակարդակներում և ազգային կառավարությունների կողմից դրանց պատշաճ ճանաչումը: Վերոնշյալին հասնելու ամենահիրատեսական ճանապարհը ԵՄ կողմից մշտական աջակցությունն ու օժանդակությունն է՝ ուղղված ակտիվ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ինչպես նաև բացառելով իշխանական հասարակական կազմակերպություններն (և պասիվ կազմակերպությունները) ազգային պլատֆորմներից՝ լեգիտիմ քաղաքացիական հասարակության ձայնն առավել լսելի դարձնելու համար:

Կարևոր է նաև հաստատել քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող հանրային վերահսկողության մեխանիզմներ՝ ԱլԳ ազգային կառավարությունների գործունեության որոշակի ոլորտների նկատմամբ: Եթե հասարակությունը չունի նոր վերնախավեր ձևավորելու հնարավորություն, ապա այն գոնե պետք է ձևավորի քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող համապատասխան վերահսկողություն, ինչն էլ իր հերթին կհանգեցնի զսպումների, հակակշիռների և վստահության համակարգի արդյունավետ գործունեությանը: Եթե ԵՄ-ն ցանկանում է տեսնել

քաղաքացիական հասարակությունը որպես լավ գործընկեր, ապա կարևոր է, որ իր աջակցությունն էլ այս տեսանկյունից անհրաժեշտ մեխանիզմների հարաբերակցության միջոցով իրականացվի՝ նպատակամղված հասարակության ամենաբարձր հնարավոր աստիճանի ներգրավվածությանը բարեփոխումների բյուջետային վերահսկողության մեջ:

Ֆորումի ազդեցության նախապայմանն է ավելացված քաղաքացիական դիսկուրսը: Ներկայումս, հայկական ազգային պլատֆորմի համար ԵՄ արժեքներին համապատասխանեցումը մարտահրավեր է հանդիսանում: Հանրային մակարդակում Ֆորումի առավել շոշափելի ազդեցության համար հասարակությունը պետք է ինքը ձևավորի իր ընտրությունները: Ընտրություն ձևավորելու համար՝ մարդիկ պետք է իրազեկված լինեն: Հանրային տեղեկատվության պակասը (վերնախավի քաղաքական դիրքորոշումներից բացի) հանդիսանում է Ֆորումի սահմանափակ ազդեցության պատճառը: Հայաստանի ազգային պլատֆորմը պետք է փնտրի հաղորդակցության խողովակներն ընդլայնելու միջոցներ՝ ուղղված հասարակության առավել լայն շերտերին, օրինակ, կատարելով այցեր դեպի Հայաստանի տարածաշրջաններ: Այս պարագայում էական նշանակություն ունի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությունն ու դրա հրապարակայնությունը՝ հիմնական թիրախ ունենալով մարդկանց, ովքեր, թվում է թե հեռու են գտնվում որոշումների կայացման հիմնական գործընթացներից:

Արդարացիորեն, Ֆորումի հաջողությունը պայմանավորված է ժամանակով: Մյուս կողմից էլ սակայն նույնսիկ շատ ժամանակն էլ արդյունք չի ցույց տա, եթե համապատասխան ուշադրություն չդարձվի կառուցվածքային վերադասավորումներին և ապագայում ներդրումների հնարավոր տարբերակներին: ԱլԳ տարածաշրջանի առանձնահատկություններից մեկն այն է, որ այն կայուն չէ, ինչպես ի սկզբանե կարող է թվալ: Այս պատճառով ԵՄ-ն պետք է տարածաշրջանում մշտապես ներգրավված լինի ֆինանսապես, քաղաքականության ոլորտում, և ամենակարևորը՝ ԱլԳ պետությունների քաղաքացիական հասարակությունների կարողությունների զարգացման միջոցով:

Հայաստանի հետ ԵՄ-ի հարաբերությունները զարգանում են ԱլԳ 2015 թվականի գագաթնաժողովի ակնկալմամբ, որը կնախանշի հարաբերության նոր ուղղությունը: Վերջինս, այս պարագայում պետք է հիմնված լինի գործունեության նոր ծրագրի և այն իրականացնելու քաղաքական կամքի վրա: Հայաստանի պարագայում այն կհանդիսանա վեջինիս ԵՄ-ն նվիրվածության ստուգում՝ հիմնված արժեքների, այլ ոչ թե առաջարկվող ֆինանսական միջոցների վրա:

Սույն հետազոտությունը առաջ է քաշում հետևյալ առաջարկությունները՝

- **Վերանայել Հայաստանի Ազգային պլատֆորմի անդամակցության սկզբունքները և ընտրության ընթացակարգերը**

  Ֆորումն ու ՀԱՊ-ն պետք է կիրառեն պլատֆորմի անդամակցության սկզբունքների և ընտրության ընթացակարգերի լիովին նոր և առավել խիստ մեխանիզմներ: Կառավարականորեն կազմակերպված ՔՀԿ-ների ներկայացուցչությունը պլատֆորմում պետք է հնարավորինս նվազեցվի: Համապատասխան ԱՊ-ի ձևավորումը առավել լավ քարոզչության իրականացումն ապահովելու համար առաջնահերթություն է հանդիսանում: Բաց անդամակցության արդյունքում ոչ օպերատիվ և պասիվ ՀԿ-ների ներառումը նույնպես մարտահրավել է շոշափելի ազդեցության հասնելու գործում: Ազգային պլատֆորմների կազմակերպությունների ընտրության համար պետք է ձևավորվեն նոր չափորոշիչներ՝ համապատասխանեցված ԵՄ արժեքներին և ուղղված քարոզչության բարելավված իրակացման համար կարողությունների հաստատմանը: Թվով ավելի քիչ ՔՀԿ-ների կողմից իրականացվող շոշափելի արդյունքը առավել

նախընտրելի է, քան ԱլԳ տարածաշրջանում ամենամեծ ԱՊ հանդիսանալը՝ առանց որևէ ազդեցության:

■ Առավել շատ ուժ Ազգային պլատֆորմներին

Փորձը ցույց է տվել, որ ԱլԳ ՔՀՖ-ը դեռևս չի ծառայել իր նպատակին, մասնավորապես՝ այն ազդեցություն չի ունեցել Հայաստանում պետական մակարդակի որոշումների ընդունման գործընթացի վրա: Հայաստանյան ԱՊ-ի համար խնդիր է ճանաչված քաղաքացիական հասարակության հաստատություն դառնալը: ԱՊ լիազորությունների ընդլայնումը կնպաստի առավել մեծ իշխանության ձևավորմանը, ինչն էլ հնարավոր կդարձնի վերջինիս ներգրավվածությունը կառավարման զսպումների և հակակշիռների համակարգի շրջանակներում՝ որպես ԵՄ-ի, ազգային կառավարության և քաղաքացիական հասարակության հավասար գործընկեր՝ ներկայացված ՀԱՊ-ի կողմից: Վերոնշյալ նպատակին հասնելու համար հայկական ԱՊ-ին պետք է առավել շատ իշխանություն լիազորվի՝ ԵՄ-հայկական կառավարություն-*քաղաքացիական հասարակություն* եռանկյունում հավասար գործընկեր լինելու համար: Սա հնարավոր կլինի ԵՄ-ի օժանդակության, աջակցության և աջակցության դեպքում նպատակային միջնորդության միջոցով:

■ Գործընկեր երկրների ՔՀԿ-ների կարողությունների զարգացում՝ մոնիթորինգի գործառույթի ուղղությամբ

Քարոզչության ազդեցության գնահատումը հանդիսանում է ազդեցության գնահատման ամենաբարդ ձևերից մեկը: Ազգային մակարդակներում ազգային պլատֆորմների գործունեության ազդեցության արդյունավետ գնահատումը հատկապես կարևոր է գործընկեր պետություններում Ֆորումի ընդհանուր ազդեցության տեսանկյունից: ԱՊ-ները, թվում է, չունեն համապատասխան կարողություններ՝ ազդեցության գնահատում իրականացնելու համար: Գործընկեր երկրների ՔՀԿ-ների կարողությունների զարգացումը՝ մոնիթորինգի գործառույթի ուղղությամբ կնպաստի Ֆորումի գործունեության բարելավմանը և կապահովի յուրաքանչյուր գործունեության/միջոցառման հաջորդականության առկայությունը:

■ ԵՄ-ն պետք է ծրագրի իր համագործակցությունն՝ ընդգրկելով քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչներին՝ բացի ազգային պլատֆորմներից

ԱլԳ ՔՀՖ-ը պետք է պահպանվի որպես ԵՄ ինտեգրման կարևոր մեխանիզմ, այն պետք է մշակի նոր սկզբունքներ այն ԱլԳ երկրների համար, որոնք մինչ այժմ արձանագրել են խոչընդոտներ և դժվարություններ: Այս նպատակով՝ բացի ԱՊ անդամներինից հարկավոր է համագործակցել նաև այլ ակտիվ ՔՀԿ-ների հետ: Ֆորումը պետք է ԱլԳ անդամ երկրների այլ ՔՀԿ-ների (ԱՊ կազմից դուրս) համար հնարավորություններ ստեղծի՝ ներգրավվելու և միջազգայնորեն լսելի լինելու համար: Վերոնշյալի իրականացման համար անհրաժեշտ է առավել ուժեղ ԵՄ ղեկավարություն և ներգրավվածություն: ԵՄ-ն պետք է նպատակ ունենա աշխատելու նաև քաղաքացիական հասարակության այլ ոլորտներում՝ ԱՊ-ների սահմաններից դուրս: Հակառակ դեպքում՝ ազդեցությունը նվազագույն է:

Հղումներ

Agnieszka, K. 2008. "Eastern Partnership: Opening a New Chapter of Polish Eastern Policy and the European Neighbourhood Policy?" http://pdc.ceu.hu/archive/00003831/.

Blue, Richard N., and Yulia G. Ghazaryan. 2004. *Armenia NGO Sector Assessment: A Comparative Study*. NGO Strengthening Program. Yerevan, Armenia: World Learning for International Development.

Blue, Richard N., David E. Payton, and Lusine Z. Kharatyan. 2001. *Armenia NGO Sector Assessment*. NGO Strengthening Program. Yerevan, Armenia: World Learning, Armenia.

Boonstra, Jos, and Natalia Shapovalova. 2010. *The EU's Eastern Partnership: One Year Backwards*. Fride. http://fride.org/download/WP99_EP_ENG_may10.pdf.

Delcour, Laure. 2011. *The Institutional Functioning of the Eastern Partnership: An Early Assessment*. Eastern Partnership Review N1. Estonian Center of Eastern Partnership. http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2276452.

EaP CSF Armenian National Platform. 2014. *Armenian National Platform Annual Report*. Annual Activities Report of the Armenian National Platform October 2013-October 2014. http://eap-csf.eu/en/documents_eap/eap-csf-documents-2014/.

Eastern Partnership Civil Society Forum. 2011. "A Strategic Roadmap for Civil Society in the Eastern Partership." http://eap-csf.eu/assets/files/publications/strategic_roadmap_for_CS_EaPCSF2011.pdf.

———. 2012. "Concept Paper for the Eastern Partnership Civil Society Forum." http://eap-csf.eu/assets/files/Documents/EaPCSFconceptpaper29jan2012final_eng.pdf.

———. 2014. "Draft Strategy of the Eastern Partnership Civil Society Forum for 2015-2017." http://eap-csf.eu/assets/files/EaP-CSF-Strategy-2015-2017.pdf.

Eastern Partnership Index. 2014. http://www.eap-index.eu/

European Union External Action Service. 2014. http://eeas.europa.eu/enp/index_en.htm.

Freire, Maria Raquel, and Licínia Simão. 2007. "The Armenian Road to Democracy-Dimensions of a Tortuous Process." *CEPS Working Documents*, no. 267. http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1338010.

Ishkanian, Armine. 2008. *Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia*. Vol. 12. Psychology Press.

Kaca, Elżbieta, Jacek Kucharczyk, and Agnieszka Lada. 2011. *Eastern Partnership Civil Society Forum & How to Improve It*. Research Report/Policy Paper. The Evaluation of Eastern Partnership. Warsaw: The Institute of Public Affairs. http://civilsocietyforum.eu/assets/files/Downloads/english/SCFEaP_how_to%20improveit_Pol-2011.pdf.

Korosteleva, Elena A. 2011a. "The Eastern Partnership Initiative: A New Opportunity for Neighbours?" *Journal of Communist Studies and Transition Politics* 27 (1): 1–21.

———. 2011b. "Change or Continuity: Is the Eastern Partnership an Adequate Tool for the European Neighbourhood?" *International Relations* 25 (2): 243–62.

Kostanyan, Hrant. 2014. *The Civil Society Forum of the Eastern Partnership Four Years on Progress, Challenges and Prospects*. http://eap-csf.eu/assets/files/HK-EaP-Civil-Society-Forum-(2)(1).pdf.

Kostanyan, Hrant, and Jan Orbie. 2013. "The EEAS' Discretionary Power Within the Eastern Partnership: In Search of the Highest Possible Denominator." *Journal of Southeast European & Black Sea Studies* 13 (1): 47–65. doi:10.1080/14683857.2013.773177.

Kostanyan, Hrant, and Bruno Vandecasteele. 2013. "The Socialization Potential of the Eastern Partnership Civil Society Forum." *Eastern Journal of European Studies* 4 (2): 95–110.

Krippendorff, Klaus. 2004. *Content Analysis: An Introduction to Its Methodology*. Sage.

Lapczyński, Marcin. 2009. "The European Union's Eastern Partnership: Chances and Perspectives." *Caucasian Review of International Affairs* 3 (2): 143–55.

Mikhelidze, Nona. 2009. "Eastern Partnership and Conflicts in the South Caucasus: Old Wine in New Skins." *Documenti IAI*, no. 0923: 11.

Paturyan, Yevgenya, and Valentina Gevorgyan. 2014. *Armenian Civil Society after Twenty Years of Transition: Still Post-Communist?* Yerevan, Armenia: Turpanjian Center for Policy Analysis. http://tcpa.aua.am/files/2012/07/Armenian_Civil_Society_after_Twenty_Years_of_Transition_Manuscript_November_2014-fin.pdf.

Paturyan, Yevgenya, Valentina Gevorgyan, and Mariam Matevosyan. 2014. "Is 'Googling' a Technique? What the Internet Can Tell Us About the Non-Governmental Sector in Armenia." *Haigazian Armenological Review* 34 (July): 257–67.

Raik, Kristi. 2006. "Promoting Democracy through Civil Society: How to Step up the EU's Policy Towards the Eastern Neighborhood". CEPS Working Document. http://aei.pitt.edu/6679/1/1298_237.pdf.

Rihackova, Vera. 2014. *Taking Stock of the EU Civil Society Funding in EaP Countries*. EUROPEUM Institute for European Policy Report Commissioned by Eastern Partnership Civil Society Forum. http://eap-csf.eu/assets/files/Europeum%20report%20on%20CSO%20funding%20in%20EaP%20countries.pdf.

Schäffer, Sebastian, and Dominik Tolksdorf. 2009. "The Eastern Partnership: 'ENP Plus' for Europe's Eastern Neighbors." *Center for Applied Policy Research· Ludwig-Maximilians-Universität Munich· Www. Cap-lmu. de No*. http://kms1.isn.ethz.ch/serviceengine/Files/ISN/99865/ipublicationdocument_singledocument/C5A88186-55C9-484D-BA6A-F00D84934D1C/en/CAPerspectives-2009-04.pdf.

Shapovalova, Natalia. 2015. *How Can the Eastern Partnership Civil Society Forum Strengthen Its Advocacy Function?* Paper Commissioned by the Eastern Partnership Civil Society Forum. http://eap-csf.eu/assets/files/Final_Advocacy_Paper_06-01-2015.pdf.

Smith, Nicholas Ross. 2012. "The EU's Two-Track Promotion of Democracy in Its Eastern Neighborhood: Examining the Case of Armenia." *Asia-Pacific Journal of EU Studies* 10 (1): 19–43.

USAID. 2011. "NGO Sustainability Index for Central and Eastern Europe and Eurasia." http://www.usaid.gov/locations/europe_eurasia/dem_gov/ngoindex/.

Հավելված 1 Փաստաթղթերի ցանկ

- Eastern Partnership Civil Society Forum. *Activities of the Armenian National Platform In Between the 4th Stockholm and 5th Chisinau Meetings of the Eastern Partnership Civil Society Forum*. Eastern Partnership Civil Society Forum, 2013.
- Eastern Partnership Civil Society Forum. *The Azerbaijan National Platform of the Eastern Partnership Civil Society Forum.* Eastern Partnership Civil Society Forum, 2013. Annual Report
- Vialichka, Ulad. *Description of State of Affairs in Belarusian National Platform of the Eastern Partnership Civil Society Forum*. Eastern Partnership Civil Society Forum, 2013.
- Eastern Partnership Civil Society Forum. *The Georgian National Platform of the Eastern Partnership Civil Society Forum*. Eastern Partnership Civil Society Forum, 2013. Annual Report.
- Eastern Partnership Civil Society Forum. *The Moldovan National Platform of the Eastern Partnership Civil Society Forum*. Eastern Partnership Civil Society Forum, 2013. Annual Report.
- Eastern Partnership Civil Society Forum. *The Ukrainian National Platform Report.* Eastern Partnership Civil Society Forum, 2013.
- Eastern Partnership Civil Society Forum. *Armenian National Platform Annual Report*. Eastern Partnership Civil Society Forum, 2014. National Platform Annual Reports.
- Eastern Partnership Civil Society Forum. *Azerbaijan: National Platform Annual Report*. Eastern Partnership Civil Society Forum, 2014. National Platform Annual Reports.
- Eastern Partnership Civil Society Forum. *Georgia: National Platform Annual Report*. Eastern Partnership Civil Society Forum, 2014. National Platform Annual Reports.
- Eastern Partnership Civil Society Forum. *Moldova: National Platform Annual Report*. Eastern Partnership Civil Society Forum, 2014. National Platform Annual Reports.
- Eastern Partnership Civil Society Forum. *Armenia: National Platform In Focus: 2013-2014*. Batumi: Eastern Partnership Civil Society Forum, 2014. EU Integration And Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum. *Azerbaijan: National Platform In Focus: 2013-2014*. Batumi: Eastern Partnership Civil Society Forum, 2014. EU Integration and Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum, *Activities of the Belarusian National Platform of EaP CSF In 2013-2014*. Batumi: Eastern Partnership Civil Society Forum, 2014. EU Integration and Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum, *Belarus: National Platform In Focus: 2013-2014*. Batumi: Eastern Partnership Civil Society Forum, 2014. EU Integration and Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum. *Georgia: National Platform In Focus: 2013-2014*. Batumi: Eastern Partnership Civil Society Forum, 2014. EU Integration And Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.

- Eastern Partnership Civil Society Forum. *Moldova: National Platform In Focus: 2013-2014*. Batumi: Eastern Partnership Civil Society Forum, 2014. EU Integration and Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum. *Ukraine: National Platform In Focus: 2013-2014*. Batumi: Eastern Partnership Civil Society Forum, 2014. EU Integration and Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum. *First Steering Committee Report for the Eastern Partnership Civil Society Forum*. Berlin: 18-19 November 2010.
- Eastern Partnership Civil Society Forum. *The Summary of Developments and Decisions of the Steering Committee of the Eastern Partnership Civil Society Forum for the Period of 30 November 2011 - 23 November 2012*. 23 November 2012. EaP CSF Steering Committee Report.
- Eastern Partnership Civil Society Forum. *Report on the Activities of the Steering Committee of the EaP CSF November 2012-October 2013*. October 2013.
- Eastern Partnership Civil Society Forum. *Report on the Activities of the Steering Committee and Secretariat of the EaP CSF November 2013 - November 2014*. November 2014.
- Eastern Partnership Civil Society Forum. *Working Group 1: Democracy, Human Rights, Good Governance and Stability*: *December 2012-September 2013.* 2013
- Eastern Partnership Civil Society Forum. *Report: Second Working Group of Civil Society Forum: Economic Integration and Convergence with EU Legislation.* 4-5 October 2013.
- Eastern Partnership Civil Society Forum. *Report: Third Working Group of Civil Society Forum: Environment, Climate Change and Energy Security: 2012-2013.* 7 October 2013.
- Eastern Partnership Civil Society Forum. *Activity Report: Fourth Working Group of Civil Society Forum.* 2013
- Eastern Partnership Civil Society Forum. *Subgroup Success Stories: Highlights 2013-2014.* Batumi, 2014. EU Integration And Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum. *Working Group 1*: *Democracy, Human Rights, Good Governance and Stability: Annual Activities Report 2013-2014.* Batumi, 2014. EU Integration and Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum. *Working Group 2*: *Economic Integration and Convergence with the EU Policies: Annual Activities Report 2013-2014.* Batumi, 2014. EU Integration and Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum. *Working Group 3*: *Environment, Climate Change and Energy Security: Annual Activities Report 2013-2014.* Batumi, 2014. EU Integration And Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum. *Working Group 4:Social and Labor Policies and Social Dialogue: Annual Activities Report 2013-2014.* Batumi, 2014. EU Integration And Common Security: Making It Happen, Eastern Partnership CSF 6th Annual Meeting.
- Eastern Partnership Civil Society Forum. *Draft Strategy of the Eastern Partnership Civil Society Forum for 2015-2017.* 21 November 2014.

- Eastern Partnership Civil Society Forum. *Articles of Association of the Secretariat of the Steering Committee of the Eastern Partnership Civil Society Forum International Non-profit Association Registered in Belgium*. 2012.
- Eastern Partnership Civil Society Forum. *An Active Partner in Democratic Transition and European Integration: A Concept Paper for the Eastern Partnership Civil Society Forum*. 29 January 2012.
- Eastern Partnership Civil Society Forum. *Eastern Partnership Civil Society Forum Concept Paper*. 2011.
- Eastern Partnership Civil Society Forum. *A Strategic Roadmap for Civil Society in the Eastern Partnership*. 24 November 2011.
- Eastern Partnership Civil Society Forum. *An Open Road From Vilnius To Riga: Assessment May 2012-October 2013*. 2013. The Eastern Partnership Roadmap To The Vilnius Summit.
- Eastern Partnership Civil Society Forum. *Joint Declaration of the Eastern Partnership Civil Society Forum.* Chisinau, 8 October 2013.
- Council of the European Union. *Joint Declaration of Prague Eastern Partnership Summit*. Brussels, 7 May 2009.
- Council of the European Union. *Joint Declaration of Warsaw Eastern Partnership Summit,* Warsaw, 30 September 2011.
- Council of the European Union,. *Joint Declaration of Vilnius Eastern Partnership Summit,* Vilnius, 29 November 2013.
- European Commission. *Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions: European Neighbourhood Policy: Working towards Stronger Partnership.* Brussels, 20 March 2013.
- European Commission. *Implementation of the European Neighbourhood Policy in Armenia: Progress in 2013 and Recommendations for Action.* Accompanying the document "Neighbourhood at Crossroads: Implementation of the ENP in 2013" Brussels, 27 March 2014.
- High Commissioner of the European Union and European Commission. *A New Response to a Changing Neighbourhood: A Review of European Neighbourhood Policy.* Brussels, 25 May 2011.
- European Commission. *Implementation of the European Neighbourhood Policy in 2013, Regional Report: Eastern Partnership: Neighbourhood at the Crossroads, Implementation of the European Neighbourhood Policy in 2013.* Brussels, 27 March 2014.
- European Commission. *Implementation of the Eastern Partnership: Report of the Meeting of Foreign Ministers.* 13 December 2010.
- European Commission. *Eastern Partnership: A Roadmap to the Autumn 2013 Summit.* Brussels, 15 May 2012.
- European Commission. *Eastern Partnership Roadmap 2012-2013: the Multilateral Dimension.* Accompanying Document to "Eastern Partnership: A Roadmap to the Autumn 2013 Summit", Joint Staff Working Document. Brussels, 15 May 2012.
- European Commission. *Neighbourhood at the Crossroads: Implementation of the European Neighbourhood Policy in 2013.* Joint Communication, Brussels, March 23 2014.

Հավելված 2 Բառերի հաճախականության ցուցակ

Բառ	Հաճախականություն
1. Development	314
2. Monitoring	159
3. Change	76
4. Result	66
5. Progress	53
6. Mechanism	46
7. Evaluation	45
8. Regulation	41
9. Promotion	39
10. Index	38
11. Instrument	33
12. Method/ology	32
13. Assessment	31
14. Achievement	28
15. Influence	28
16. Tool	28
17. Success	26
18. Analysis	25
19. Criterion/a	24
20. Contribution	21
21. Improvement	15
22. Effect	14
23. Outcome	13
24. Impact	12
25. Advancement	11
26. Output	10
27. Indicator	8
28. Reaching	8
29. Expansion	7
30. Follow-up	7
31. Growth	7
32. Measure/ment	5
33. Fulfilment	4
34. Realisation	4
35. Statistics	3
36. Attainment	2
37. Check	2
38. Examination	2
39. Sustainability	2
40. Appraisal	1
41. Enhancement	1
42. Scoring	1
43. Upgrade	1
44. Accomplishment	0
45. End-product/end-result	0
46. Enrichment	0
47. Estimation	0
48. Procedure	0
49. Rating	0
50. Scaling	0

Հավելված 3 Հարցազրույցի ուղեցույց

EaP CSF Revisited OSI Policy Research Fellowship Initiative_Research leader Valentina Gevorgyan (vgevorgyan@aua.am)

անուն, ազգանուն_____ **օր** _____
պաշտոն_____ **վայր** _____

- **Ի՞նչ է ըստ Ձեզ Արևելյան Գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովը** (փորձեք այն նկարագրել մեկ նախադասությամբ): Ո՞րն է համաժողովի հիմնական առաքելությունը/նպատակը:

Ազդեցության գնահատում /հաջողությունը չափագրող հարցեր

- Ձեր կարծիքով՝ արդյո՞ք Ֆորումը հաջողություն է: Որո՞նք են Համաժողովի հաջողության չափանիշները: **Խնդրում ենք տրամադրել հստակ պատասխան:**

- Որո՞նք են Համաժողովի գործունեության արդյունքում մինչ այժմ գրանցված հիմնական ձեռքբերումները/արդյունքները Ձեր երկրում: **Խնդրում ենք տրամադրել համապատասխան օրինակներ:**

- Ինչպիսի՞ խնդիրների կամ դժվարությունների եք հանդիպել Քաղաքացիական հասարակության համաժողովի շրջանակներում իրականացրած Ձեր աշխատանքների ընթացքում: *Խնդրում ենք տրամադրել օրինակներ:*

- Ո՞րն է համաժողովի ազդեցությունը համապատասխան երկրների քաղաքացիական հասարակությունների վրա (եթե այդպիսիք առկա են): Արդյո՞ք կարող եք տրամադրել քաղաքաղացիական հասարակության որևէ ոլորտի զարգացման կամ առաջընթացի որոշակի օրինակներ: Ինչպե՞ս եք սահմանում հաջողությունը այս համատեքստում:

- Արդյո՞ք Դուք ունեք որևէ ռազմավարություն կամ մեխանիզմ՝ Ձեր կառույցի գործունեությունը գնահատելու համար: Ինչպե՞ս եք չափում հաջողությունը/ ի՞նչ հիմքեր եք օգտագործում հաջողության չափման համար:

- Արդյո՞ք առկա են որոշակի ծրագրերի համար նախատեսված հաջորդական մեխանիզմներ: **Խնդրում ենք տրամադրել համապատասխան օրինակ:**

Համագործակցությունը համաժողովի շրջանակներում

ԵՄ – Քաղաքացիական հասարակության ոլորտ – Ազգային կառավարություն եռանկյուն

- Ինչպիսի՞ն է ԵՄ-ի դերը (եթե այդպիսին առկա է) գործընկեր պետություններում տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աջակցման կամ դրանց գործունեությանը նպաստելու գործում: *Խնդրում ենք տրամադրել համապատասխան օրինակ:*

- Որ՞ն է Համաժողովի դերը (եթե այդպիսին առկա է) տեղական քաղաքացիական հասարակության որոշակի ոլորտների և ազգային կառավարությունների միջև համագործակցության զարգացման գործում:

- Ինչպե՞ս կգնահատեք Ձեր Ազգային Պլատֆորմի գործունեությունը/աշխատանքը (այլ պլատֆորմների հետ համեմատության համատեքստում): Արդյո՞ք առկա են որոշակի ոլորտներ, որոնք բարելավման կարիք ունեն: Որո՞նք են այն բացթողումները, որ կարող են շտկվել:

- Ինչպե՞ս կգնահատեք Ազգային պլատֆորմների գործունեությունը համեմատական համատեքստում: Կարո՞ղ եք մատնանշել որևէ պլատֆորմ, որն առավել լավ է գործում (ըստ

պետության/ոլորտի): Ըստ Ձեզ, որո՞նք են այն առանցքային գործոնները, որոնք դրականորեն տարբերակում են գործընկեր պետություններին այս տեսանկյունից:

Եզրափակիչ մտորումներ, առաջարկություններ

- Արդյո՞ք որևէ մեխանիզմի հասանելիությունը (Համաժողովի հաջողությունը չափելու համար) կունենա դրական ազդեցություն: (Նախապես մշակված մեխանիզմի առկայության դեպքում)

- Որո՞նք են **գործընկեր պետություններում արձանագրված հիմնական երեք ձեռքբերումները՝** համաժողովի հիմնադրումից ի վեր իրականացված գործունեության արդյունքում: Նաև, խնդրում ենք նշել այն հիմնական մարդկանց/ստորաբաժանումները, որոնք առանցքային դեր են ունեցել վերոնշյալ արդյունքներին հասնելու գործում: ***Խնդրում ենք տրամադրել օրինակներ:***

- Որո՞նք են **գործընկեր պետություններում արձանագրված հիմնական երեք ձախողումները՝** համաժողովի հիմնադրումից ի վեր իրականացված գործունեության արդյունքում: Նաև, խնդրում ենք նշել այն հիմնական մարդկանց/ստորաբաժանումները, որոնք որևէ կերպով խոչընդոտել են առաջընթացին կամ որոշակի գործունեության իրականացմանը: ***Խնդրում ենք տրամադրել օրինակներ:***

- Ըստ Ձեզ, ո՞րը կլինի Համաժողովի գործունեության ամենասպասելի արդյունքը՝ ընդհանրական տեսանկյունից:

- Ձեր առաջարկությունները:

Հավելված 4 Հարցազրույցի ինդեքսավորման սխեմա

MAXQDA կոդավորում: Կիսանախագծված հարցազրույցներ ԱլԳ ՔՀՖ-ի անդամների հետ՝ ինդեքսավորման սխեմա
EaP CSF Revisited OSI Policy Research Fellowship Initiative_Research leader Valentina Gevorgyan (vgevorgyan@aua.am)

1. ԱլԳ ՔՀՖ-ի պատմությունը EaP CSF story
1.1 ԱլԳ ՔՀՖ-ի դերը
1.2 ԱլԳ ՔՀՖ-ի նպատակները
1.3 ԱլԳ ՔՀՖ-ի գործունեությունը
1.4 Ֆորումի հաջողության հայեցակարգում
1.5 Նվաճումներ/հաջողություն (մինչ այժմ)
1.6 Խնդիրներ՝ դժվարություններ, խոչընդոտներ Problems; difficulties; obstacles

2. Ազդեցության գնահատում
2.1 Հաջողության ցուցանիշներ
2.2 Ազդեցության չափման ցուցանիշներ
2.3 Համապատասխան մարմնի աշխատանքի գնահատում
2.4 Գործընկեր երկրի քաղաքացիական հասարակության վրա Ֆորումի ազդեցությունը
2.5 Ազդեցության գնահատման մեխանիզմի առկայություն (այո/ոչ)
2.6 Ազդեցության գնահատման մեխանիզմի առկայություն (լավ/վատ՝ ինչու)

3. Համագործակցություն/փոխգործակցություն
3.1 Եռանկյունաձև տվյալներ (ԵՄ-քաղաքացիական հասարակություններ-ազգային կառավարություններ)
3.2 ԵՄ-ի դերը քաղաքացիական հասարակության ոլորտների օժանդակության մեջ
3.3 ԵՄ-ի դերը ԱՊ-ների օժանդակության տեսանկյունից
3.4 Համեմատական տվյալներ (ԱլԳ վեց երկրներ)
3.5 ԵՄ + Հայաստան = հարաբերություն
3.6 Այլ առանձնահատուկ նյութեր Հայաստանի/ՀԱՊ-ի վերաբերյալ

4. Եզրափակիչ անդրադարձ
4.1 Երեք հիմնական օգտակար արդյունքներ
4.2 Երեք հիմնական ձախողումները
4.3 Ամենասպասելի արդյունքը (ապագայում)
4.4 Բարելավման վերաբերյալ առաջարկություններ (ինչն է հարկավոր փոխել)
4.5 Մեջբերումներ
4.6 Հետաքրքիր նյութեր